Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt *Der Vorstand*

«ՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ»

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹ-ՓԱՌԱՏՈՆ

Հավելված

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն. Հեքիաթների մասին 2

Հեքիաթների ընտրության մասին 3

Հեքիաթները 5

1. ԱՆԵՐԵՎՈՒՅԹ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ (Ռիչարդ ֆոն Ֆոլքման-Լինդեր) 5

2. ՄԻ ԿԱԹԻԼ ՄԵՂՐԸ (Հովհաննես Թումանյան) 14

3. ՍԵՒՈՒԿ ՈՒԼԻԿԸ (Հովհաննես Թումանյան) 25

4. ԳԱՅԼՆ ՈՒ ԻՐ ՅՈԹ ՈՒԼԻԿՆԵՐԸ (Գրիմ Եղբայրներ) 28

5. ՇՈՒՆՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ (Հովհաննես Թումանյան) 32

6. ԿԱՏՎԻ ՈՒ ՄԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ (Գրիմ Եղբայրներ) 36

7. ՔԱՋ ՆԱՁԱՐԸ (Հովհաննես Թումանյան) 40

8. ՔԱՋ ԴԵՐՁԱԿԸ (Գրիմ Եղբայրներ) 52

Գրականության ցանկ 61

Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt *Der Vorstand*

Ներածություն. Հեքիաթների մասին

Հեքիաթը համամարդկային արժեք է: Անկախ այն բանից, թե որ ազգի լեզվով է հյուսվել հեքիաթը, այն հասկանալի եւ ուսանելի կարող է լինել բոլորի համար, քանզի հեքիաթում խտացուած են բոլոր ազգերի եւ ժողովուրդների արքետիպերը: Ժողովրդական հեքիաթներում սովորաբար վեր են հանվում որեւէ հասարակության մեջ առկա խնդիրներն ու բացերը: Հեքիաթը կարդացողներիս հնարավորություն է տալիս՝ կատարելու մի յուրօրինակ ճանապարհորդություն դեպի մեր սեփական ներաշխարհը՝ փնտրելու եւ գտնելու մեր ներսում բոլոր այն հեքիաթային հերոսներին, որոնց մասին կարդում ենք՝ անկախ նրանից դրական, թե բացասական կերպարներ են: Միաժամանակ հեքիաթը հուշում է մեզ հուզող շատ հարցերի պատասխաններ եւ տարաբնույթ խնդիրների լուծումներ:

«Հեքիաթը ամենաբարդ ստեղծագործությունն է, նույնիսկ հանճարները հեքիաթներ չեն կարողանում արարել, բայց հեքիաթների են ձգտում», ասել է հայ մեծանուն հեքիաթագիր եւ գրող Հովհաննես Թումանյանը:

Հեքիաթների հեղինակը հիմնականում ժողովուրդն է: Այն ինչ կյանքում անհնար է իրականացնել, մարդիկ ցանկացել են տեսնել հեքիաթներում: Հեքիաթներում հաճախ են խառնվում իրական ու երեւակայականը: Հեքիաթները կատարել եւ կատարում են հասարակության իղձերի ձգտումների յուրահատուկ հաղորդչի դերը: Ի վերջո դանիացի մեծանուն հեքիաթագիր Հանս Քրիստիան Անդերսենի խոսքերով «Յուրաքանչյուր մարդու կյանքն ել Աստծո ձեռքով գրված հեքիաթ է»:

Հեղ.՝ Շուշան Թումանյան եւ Աննա Միքայելյան

Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt *Der Vorstand*

Հեքիաթների ընտրության մասին

Հաջորդիվ ձեզ ենք ներկայացնում ութ ընտրված հեքիաթներ: Առաջին երկու հեքիաթներից մեկը մեր տեսանկյունից ընտրել ենք որպես տիպիկ գերմանական եւ երկրորդը՝ որպես տիպիկ հայկական հերքիաթներ: Յուրաքանչյուր հեքիաթի համար կա նաեւ հայերեն եւ գերմաներեն թարգմանությունը: *Գերմաներեն գրված կամ թարգմանված հեքիաթները գերմանալեզու հավելվածում են գտնվում:*
Մյուս հեքիաթները ներկայացված են զույգերով՝ մեկ հայկական եւ մեկ գերմանական հեքիաթ, որոնք նմանատիպ թեմաներ են արծարծում:

Առաջին հեքիաթը **Աներեւյթ թագավորությունն** է՝ Ռիչարդ ֆոն Ֆոլքման-Լենդերի *(1830-1889)* կողմից գրված: Սույն հեքիաթը թարգմանվել է հայերեն հայոց ամենայն բանաստեղծ եւ մտավորական Հովհաննես Թումանյանի *(1869-1923)* կողմից[1]:

Երկրորդ հեքիաթը *Հովհաննես Թումանյանի* **Մի կաթիլ մեղր** հեքիաթն է: Այն թարգմանվել է գերմաներեն Ժիրայր Քոչարեանի եւ Վինֆրիդ Դալմանի կողմից:

Երրորդ եւ **չորրորդ**, **հինգերորդ** եւ **վեցերորդ**, **յոթերորդ** եւ **ութերորդ** հեքիաթները նմանատիպ խնդիրներ են վերհանում: Բոլոր հեքիաթները հաջորդիվ ներկայացվում են նաեւ աղյուսակով.

Թիվ	Հայկական հեքիաթներ	Գերմաներեն թարգմանությունը	Թիվ	Գերմանական հեքիաթներ	Հայերեն թարգմանությունը
			1	Vom unsichtbaren Königreiche (Richard von Volkmann-Leander)	Աներեւույթ թագավորությունը (Հովհաննես Թումանյան)

[1] Հղումը՝ http://armenianhouse.org/tumanyan/tales-am/kingdom.html, վերջին մուտք՝ 9.04.2023:

Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt *Der Vorstand*

2	Մի կաթիլ մեղրը[2] (Հովհաննես Թումանյան)	Ein Tropfen Honig (Gerayer Koutcharian und Winfried Dallmann)			
3	Սեւուկ Ուլիկը[3] (Հովհաննես Թումանյան)	Das Zicklein Ulik (Tessa Hofnann, Gerayer Koutcharian)	4	Der Wolf und die sieben jungen Geißlein (Brüder Grimm)	Գայլն ու յոթ ուլիկները[4] (Հովհաննես Թումանյան)
5	Շունն ու կատուն[5] (Հովհաննես Թումանյան)	Hund und Kater (Tessa Hofnann, Gerayer Koutcharian)	6	Katze und Maus in Gesellschaft (Brüder Grimm)	Կատվի ու մկան ընկերությունը[6]
7	Քաջ Նազարը[7] (Հովհաննես Թումանյան)	Der tapfere Nazar (übers. v. Agapi Mkrtchian)	8	Das tapfere Schneiderlein (Brüder Grimm)	Քաջ դերձակը[8] (Հովհաննես Թումանյան)

[2] Հղում՝ https://grqaser.org/am/102/, վերջին մուտք՝ 9.04.2023:

[3] Հովհ. Թումանյան, «Ուլիկը», Հայկական հեքիաթներ, կազմող՝ Սմբատ Գյուրջյան: «Ջի էս էմ ստուդիա» ՍՊԸ, Երեւան 2014, էջ 9-10:

[4] Հղումը՝ https://tarntercum.ru/2016/11/grim-exbayrner-gayln-u-yot-uliknery.html, վերջին մուտք՝ 9.04.2023:

[5] Հղումը՝ https://hy.wikisource.org/wiki/Շունն_ու_Կատուն, վերջին մուտք՝ 9.04.2023:

[6] Հղումը՝ https://grqaser.org/am/318/, վերջին մուտք՝ 9.04.2023:

[7] Հովհ. Թումանյան, «Քաջ Նազարը», Հայկական հեքիաթներ, կազմող՝ Սմբատ Գյուրջյան: «Ջի էս էմ ստուդիա» ՍՊԸ, Երեւան 2014, էջ 52-59:

[8] Գրիմ Եղբայրներ, «Քաջ դերձակը»: Ռուսերենից թարգմանեց Ամալյան Ղուկասյանը:Արեւիկ հրատ., Երեւան 2007թ., էջ 49-56:

Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt *Der Vorstand*

Հեքիաթները

1. ԱՆԵՐԵՎՈՒՅԹ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ (Ռիչարդ ֆոն Ֆոլքման-Լինդեր)

Գյուղից մի քիչ ծուռը, սարալանջին մի փոքրիկ տնակում իր ծեր հոր հետ ապրում էր ջահել Իերգը: Ունեցած հողերն ուղիղ էնքան էր, ինչքան որ հարկավոր էր անկարոտ ապրելու համար: Հենց տան կողքից սկսվում էր.կաղնի ու հաճարի ծառերի թավ ու պառավ անտառը, իսկ տան առաջին ընկած էր մի հին, կոտրած ջաղացքար: Էն հին կոտրած ջաղացքարին նստողի աչքին սքանչելի տեսարան էր բացվում դեպի հովիտը, դեպի հովիտով վազող գետը ու դեպի սարերը, որ բարձրանում էին գետի մյուս կողմը: Իերգը իր գործը դաշտում վերջացնելուց հետո, իրիկունները սիրում էր նստել էս քարի վրա. արմունկները ծնկներին տված ու գլուխը հենած ձեռներին՝ նա ժամերով նստում էր ու անձնատուր էր լինում իր ցնորքներին:

Եվ որովհետև գյուղի գործերով էլ շատ չէր հետաքրքրվում ու գրեթե միշտ մնում էր խաղաղ, մենակ իր մտքերի մեջ խորասուզված, գյուղացիք էլ, հեգնելով, անունը դրել էին Երազող Իերգ: Նա էլ իսկի չէր նեղանում սրանից:

Քանի մեծանում էր՝ էնքան առանձնանում էր ու դառնում լռակյաց, իսկ երբ հերն էլ մեռավ ու դին կաղնենու տակ թաղեց, նրանից հետո հո էլ ձեն չէր հանում: Այժմ առաջվանից ավելի հաճախ էր նստում հին կոտրած ջաղացքարին ու նայում էր ներքև, հովտին, որտեղից իրիկվան մշուշը բարձրանում ու մեղմիկ սողում էր սարն ի վեր. հետևում էր հետզոետե ցած իջնող մութին, ծագող լուսնին ու իրար ետևից ցոլացող աստղերին: Նրան էնպես էր թվում, թե գետի ալիքները երգում էին, սկզբում մեղմ ու կամացուկ, ապա թե պարզ ու լսելի: Երգում էին էն սարերից, որտեղից սկիզբ էին առնում, երգում էին էն ծովերից, որոնց ծոցն էին հոսում, ու իրենց ջրերում ապրող հավերժահարսներից: Սրանից հետո անտառն էր սկսում աղմկել, միայն թե ուրիշ տեսակ, քան թե սովորաբար աղմկում են անտառները, ու շատ զարմանալի պատմություններ էր անում:

Մյուսներից շատ պատմություն գիտեր մանավանդ ծառերից մինը, էն պառավ կաղնին, որի տակ թաղված էր իր հերը: Աստղերն էլ հո, որ ցոլցլում էին երկնքում, ասես թե լցվում էին ներքև թափվելու սաստիկ տենչով, ուզում էին թափվեն ցած էն կանաչ

անտառն ու էն կապուտակ գետը, ու էնպես էին վառվռում ու թռվռում, կարծես թե էլ չէին կարողանում դիմանան ներքևի հրապուրանքներին: Բայց հրեշտակները, որոնցից ամեն մինը կանգնած էր իր աստղի կողքին, շարունակ զսպում էր նրանց ու ասում. «Այ աստղիկնե՛ր, ա՛յ աստղիկներ, էդպես խենթություն մի՛ անեք, ա՛յ աստղիկներ: Դուք երեխա հո չե՞ք, որ էդպես գժություններ եք անում, քանի՜-քանի հազար տարի է ապրում եք տիեզերքում: Ավելի լավ է խաղաղ ու հանգիստ ձեր տեղը մնաք...»

Այո՛, հրաշալի էր էն հովիտը: Միայն թե էս ամենը տեսնում ու լսում էր մենակ Երազող Իերգը: Իսկ գյուղում ապրող մնացած մարդիկ սովորական մարդիկ էին, մտքներովը էս տեսակ բաներ իսկի էլ անց չէին կացնում: Ժամանակ առ ժամանակ նրանք կտրում էին անտառի հսկա ծառերից մեկն ու մեկը, սղոցում, ջարդում, ծղան անում ու կրակին վրա տալով ասում. «Դե՛, ա՛յ հիմի նորից կարող ենք սուրճ եփել խմել»: Գետի մեջ իրանց լվացքն էին անում, որ շատ մեծ հարմարություն էր նրանց համար: Աստղերին նայելիս էլ, երբ որ տեսնում էին շատ են պայծառ ցոլում, ասում էին. «Էս գիշեր թունդ ցուրտ է լինելու, մեր կարտոֆիլը ցրտատար չլինի՞»: Իերգն էլ եթե ճգնում էր նրանց բացատրի, թե բանն ընչումն է, ծիծաղում էին վրեն:

Մի անգամ էլ, երբ Իերգը իր սովորությամբ հին ջաղացքարի վրա նստած միտք է անում, թե ինքը ինչքան է մենակ բովանդակ աշխարհքում, քունը տարավ ու աննկատելի քնեց: Երազում տեսավ, իբրև թե երկու արծաթ շղթաներով երկնքից մի ոսկի ճոճ էր իջնում ներքև: Ամեն մի շղթայի ծերը ամրացած էր մի աստղից, իսկ ճոճում նստած էր մի գեղեցիկ աղջիկ ու էնպես բարձր էր ճոճում, որ մին երկնքից գետին էր հասնում, մին էլ գետնից երկինք էր թռչում: Ամեն անգամ, հենց որ ճոճը երկնքից երկրին էր մոտենում, աղջիկը ուրախությունից ծափ էր տալիս ու մի վարդ ձգում Իերգին: Բայց հանկարծ արծաթի շղթաները կտրեցին, ու ճոճը աղջկա հետ երկուսն էլ երկինք թռան, գնացին վե՛ր, վե՛ր, մինչև որ աչքից բոլորովին չքացան:

Իերգը քնից վեր թռավ, չորս կողմը նայեց, տեսավ քարի վրա, կողքին մի վարդի փունջ:

Մյուս օրը նորից քնեց էնտեղ, նորից նույն երազը տեսավ, ու երբ որ զարթնեց, դարձյալ կողքին վարդեր էին թափած:

Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt *Der Vorstand*

Էսպես շարունակ մի ամբողջ շաբաթ: Իերգը վճռեց, որ էս երազը եթե էսպես նույնությամբ կրկնվում է, կնշանակի սրա մեջ մի ճշմարիտ բան կա: Վճռեց, տան դուռը փակեց, բանալին գրպանը դրեց ու գնաց էն աղջկանը որոնելու:

Գնա՛ց, գնա՛ց, երկար թափառեց, շատ ման եկավ, վերջապես մի երկիր տեսավ, հեռու, ուր ամպերը հասնում էին մինչև գետին: Աշխույժ, ուրախ առաջ գնաց ու մի քիչ ժամանակ հետո ընկավ մի մեծ անտառ: Հանկարծ էստեղ մի հառաչանքի ձեն ընկավ ականջովը: Վազեց էն կողմը, որտեղից լսվում էր ձենը, տեսավ ալեխառն մորուքով մի պատկառելի ծերունի՝ գետին ընկած երկու մերկանդամ այլանդակ մարդ էլ վրեն չոքած՝ ուզում են խեղդեն: Իերգը չորս կողմը նայեց, տեսնի ինչով կարող է օգնության հասնի. մի մեծ կոճղ պոկեց, որ պոկելուն պես դարձավ, ծանր տապար: Էս տապարով էնպես ուժգին հարձակվեց չարագործների վրա, որ նրանք օգնություն կանչելով ծերունուն թողին ու փախան: Իերգը վեր քաշեց ծերունուն, օգնեց, որ կարգի գա, ու հարցրեց, թե ինչո՞ւ էին տկլոր ավազակները խեղդում իրեն, ի՞նչ էին ուզում:

Եվ ծերունին պատմեց, թե՝ ես Երազների աշխարհի թագավորն եմ, սխալմունքով մի քիչ հեռացել էի իմ տերության սահմաններից, ընկել էի իմ ամենաոխերիմ թշնամու՝ Իրականության թագավորի տերությունը: Էս բանը նկատել էր Իրականության թագավորը, իր ծառաներից երկուսին ղրկել էր իմ դեմ, նրանք էլ դարան մտնելով բռնել էին ինձ ուզում էին խեղդեն...

— Դու իրականության թագավորին ի՞նչ վատություն ես արել որ...— հարցրեց Իերգը:

— Ոչ մի վատություն,— պատասխանեց ծերունին,— բայց առհասարակ նա շատ անբարիշտ բնություն ունի, իսկ ինձ ատելով ատում է:

— Բայց էն մարդիկը, որոնց նա ղրկել էր քո դեմ, տկլո՞ր էին:

— Հա՛,— պատասխանեց Երազների թագավորը,— նրանք մորուց տկլոր են: Էդպես է Իրականության աշխարհքի մոդան, էնտեղ ամենքը, նույնիսկ իրենց թագավորը տկլոր են ման գալիս ու իսկի էլ չեն ամաչում դրանից: Զարմանալի խալխ են: Բայց դու որ իմ կյանքը փրկեցիր, ուզում եմ երախտահատույց լինեմ քեզ ու ցույց տամ իմ աշխարհքը: Երազների աշխարհքը ամենասքանչելի աշխարհքն է, իսկ երազները իմ հպատակներն

են:

Ասավ երազների թագավորն ու առաջ գնաց. Իերգը հետևեց նրան:

Երբ հասան էնտեղ, որտեղ ամպերը գետնին են առնում, թագավորը մի թփուտում ծածկած դուռը ցույց տվեց, որ՝ ով որ չիմանար, անկարելի բան էր, որ գտներ ու բաց աներ:

Թագավորը դուռը բաց արավ, իր ուղեկցին տարավ հինգ հարյուր աստիճան ներքև, մի պայծառ, լուսավորված քարանձավով, որ ձգվում էր երկար, շատ ու շատ մղոններ: Զարմանալի գեղեցիկ էր էն քարանձավը: Էլ ինչ ասես որ չկար էնտեղ: Մեծ լճերի մեջ, կղզիների վրա, կանգնած պալատներ կային, ու կղզիները հանգիստ լողում էին վճիտ ջրերում: Ով ուզեր էն պալատներից մեկն ու մեկի մեջ մտնի՝ պետք է ափին կանգներ ու կանչեր.

«Պալա՛տ, պալա՛տ, լողա՛ դեպ ինձ,

Որ հեշտ մտնեմ ես քո դռնից»:

Ու պալատն իրան-իրան կլողար դեպի ափերը: Կային և ուրիշ դղյակներ, որ հանդարտ օրորվում էին ամպերի վրա: Պետք էր միայն ասել.

«Դղյա՛կ, դղյա՛կ, իջի՛ր դեպ ինձ,

Որ հիանամ ես քո տեսքից»:

Ու դղյակը հանդարտիկ գետին կիջներ: Պարտեզներ էլ կային, որոնք ծաղիկներ ունեին, որ ցերեկները բուրում էին անուշահոտ, իսկ գիշերները լույս էին տալիս: Ամենաերփներանգ գույներով վառվող հավքեր կային, որ հեքիաթներ էին պատմում, և ուրիշ շատ ու շատ զարմանահրաշ բաներ: Երազող Իերգը զարմանքից ու խնդությունից չէր իմանում ո՛րին նայի, ո՛րը թողնի:

— Արի հիմի քեզ իմ նպատակները՝ երազները ցույց տամ,— ասավ թագավորը:— Երեք տեսակ երազներ ունեմ, լավ երազներ՝ բարի մարդկանց համար, վատ երազներ՝ չարերի համար, և, սրանցից բացի, ունեմ նաև խիպիլիկ երազներ: Սրանցով էլ զանազան խաղեր

եմ հորինում: Չէ՞ որ երբեմն-երբեմն թագավորներն էլ են ուզում զվարճանան:

Էստեղից թագավորը Իերգին տարավ մի այգի, ուր ծառուղիները արծաթից էին, ածուները ոսկուց, իսկ ծաղիկները անգին քարերից: Էստեղ, զբոսնում էին լավ երազները:

Առաջինը Իերգի աչքին ընկավ մի դալկադեմ նորատի ջահել կին, ձեռքին խաղալիքներով լիքը մի արկղիկ:

— Սա ո՞վ է:

— Էդ կինը ամեն իրիկուն գնում է մի հիվանդ երեխի մոտ, որի մերը նորերս է մեռել,— ասավ Երազների թագավորը:— Ցերեկը որբ երեխան միշտ մնում է մենակ, իսկ գիշերները սա գնում է հետը խաղում ու մոտը մնում մինչև լույս: Սակայն, ե՛կ, մի քիչ էլ գնանք դեսը:

Գնացին: Մտան մի ուրիշ այգի՝ լիքը բարի երազներով: Բարի երազները տղամարդկանց ու կանանց, ծերերի ու երեխաների կերպարանքներով, բոլորն էլ բարի, ժպտուն դեմքերով, ամենագեղեցիկ զգեստներով: Շատերը ձեռներին բռնած ունեին ամեն տեսակ լավ բաներ, ինչ որ միայն կարող է ուզել մարդու սիրտը: Բայց Իերգը հանկարծ կանգ առավ ու էնպես բարձր ճչաց, որ բոլոր երազները դառան դեպի նա:

— Ի՞նչ պատահեց,— հարցրեց թագավորը:

— Ահա էստեղ է իմ ծանոթ աղջիկը, որ ինձ երևում էր էնքան հաճախակի ու վարդեր էր բերում ինձ համար:

— Իհարկե, իհարկե էստեղ է,— պատասխանեց թագավորը:— Հենց նա ինքն է, որ կա: Ճշմարիտ է, չէ՞ որ քեզ լավ երազ էի ղրկում: Գրեթե ամենալավ երազը...

Ու Իերգը վազեց դեպի իր ծանոթ աղջիկը, որ ինչպես միշտ, իր ոսկե ճոճում նստած ճոճում էր: Նա էլ, հենց սրան տեսավ թե չէ, ներքև թռավ ու վազեց գիրկն ընկավ: Իրար ձեռից բռնած նստեցին մոտակա ոսկի աթոռին ու հրճվանքով անվերջ կրկնում էին, թե ի՛նչ լավ եղավ, որ նորից իրար պատահեցին: Կրկնում էին ու կրկնում, և կարծես միշտ

նոր էին ասում։

— Դե՛, երեխե՛ք, հերիք է։ Քո տունը հեռու է, Իե՛րգ, ե՞րբ

պետք է հասնես։ Էստեղ քեզ չեմ կարող թողնել, մենք քեզ համար տեղաշոր չունենք։ Դու գիտես, որ երազները չեն քնում, այլ գիշերները գնում են վերև՝ մարդկանց մոտ։ Դու էլ, աղջի՛կս, պատրաստվի՛ր, ժամանակն է, որ ճանապարհ ընկնես։ Ոտից գլուխ հագիր քո վարդագույն զգեստներդ ու ե՛կ, ես քեզ կասեմ, թե ո՛ւմ ես երևալու էս գիշեր ու ի՛նչ ես անելու։

Երազող Իերգը էս որ լսեց, էնպես մի տղամարդություն եկավ վրեն, որ բնավ չէր ունեցել։ Վեր կացավ ու հաստատուն ձենով էսպես կանչեց.

— Հա՛յր արքա,— ասավ,— ես էլ չեմ բաժանվելու իմ երազից, իմ թագուհուց։ Կամ ինձ պետք է թողնեք, որ մնամ էստեղ, կամ նրան պետք է թողնեք, որ մեր աշխարհքը գա ինձ հետ։ Առանց սրան էլ չեմ կարող ապրել, էնքա՛ն եմ սիրում...

Ու աչքերը լցվեցին խոշոր արցունքներով։

— Բայց, Իե՛րգ,— խոսեց Երազների թագավորը,— պետք է իմանաս, որ սա իմ ամենալավ երազն է։ Սակայն դու իմ կյանքը փրկել ես, Իե՛րգ, թո՛ղ էնպես լինի, ինչպես դու ես կամենում։ Ա՛ռ քո երազը ու գնա ձեր աշխարհքը։ Բայց վերև գնաք թե չէ՝ սրա գլխի արծաթե քողը պետք է վերցնես ու դռնից գցես ներքև՝ դեպի ինձ։ Էն ժամանակ քո երազը՝ քո թագուհին էլ միս ու արյուն կառնի... կդառնա իսկական կին, թե չէ այժմ նա անմարմին երազ է միայն...

Իերգը թագավորին սրտանց շնորհակալություն արավ ու ասավ.

— Սիրելի թագավոր, քանի որ դու էդքան բարի ես, համարձակվում եմ մի խնդիրքով էլ անհանգստացնել քեզ։ Տեսնում ես արդեն թագուհի ունեմ, բայց թագավորություն չունեմ։ Ի՞նչպես կլինի՝ թագուհին առանց թագավորության։ Չե՞ս կարող արդյոք մի թագավորություն էլ տալ։ Ի՛նչքան ուզում է փոքրիկ լինի, միայն թե թագավորություն լինի։

Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt *Der Vorstand*

— Գիտե՞ս ինչ կա, Իերգ,— պատասխանեց Երազների թագավորը.— թե տեսանելի թագավորություններ ես ուզում, ես չունեմ, բայց աներևույթ թագավորություններ ունեմ, և նրանցից մինը քեզ եմ նվիրում, էն էլ ամենամեծերից ու ամենահոյակապներից մինը։

Իերգը հետաքրքրվեց իմանա, թե ինչ տեսակ բաներ են էդ աներևույթ ասված թագավորությունները, բայց թագավորը նրան պարզեց, թե ամեն բան ինքը ժամանակին կիմանա և շատ կզարմանա, երբ տեսնի, թե ի՛նչ լավ է ու ի՛նչքան հարմար էդ տեսակ աներևույթ թագավորություն ունենալը։

— Սովորական, տեսանելի թագավորությունները շատ անգամ շատ հոգսեր ու անախորժություններ են ունենում,— բացատրեց թագավորը։— Օրինակի համար. ասենք թե դու թագավոր ես. մին էլ տեսար՝ առավոտը վաղ նախարարը մոտեցավ անկողնիդ ու ասում է.

«Ձերդ մեծություն, տերության կարիքների համար ինձ մի հազար ռուբլի է պետք»։ Գանձարանը բաց են անում, տեսնում ես՝ մեջը կոպեկ չկա։ Ի՞նչ անես։ Դեռ այն էլ կարող է պատահել, որ քեզ պատերազմ հայտնեն, հաղթեն, ու էն թագավորը, որ քեզ հաղթել է, պսակվի հենց քո թագուհու հետ, իսկ քեզ մի աշտարակում փակի։ Իսկ աներևույթ թագավորության մեջ անկարելի է, որ էդ տեսակ բաներ պատահեն։

— Բայց եթե էդ թագավորությունը աներևույթ է ու մենք չենք տեսնելու, դրանից ի՞նչ դուրս կգա,— հարցրեց Իերգը։

— Այ անխելք մարդ,— բացականչեց թագավորը,— ախր չէ՞ որ ձեզ համար աներևույթ չի լինիլ, դու ու քո թագուհին կտեսնեք։ Դուք պարզ կտեսնեք ձեր թագավորությունը և պալատները իրենց պարտեզներով, և՛ մարգագետինները, և՛ անտառները։ Նրանց մեջը կապրեք, կզբոսնեք, կանեք, ինչ որ քեֆներդ կտա։ Միայն ուրիշների համար կլինի աներևույթ, ուրիշները չեն տեսնիլ ձեր թագավորությունը։

Իերգը սրա վրա շատ ուրախացավ, որ իրենց գյուղացիք ոչ կտեսնեն, որ ինքը թագուհի ու թագավորություն ունի, ոչ էլ նախանձից խեթ կնայեն։ Շնորհակալություններով հրաժեշտ տվեց Երազների թագավորին, իր թագուհու հետ հինգ հարյուր աստիճան վերև բարձրացավ, նրա գլխից վեր առավ արծաթի քողը ու ձգեց ներքև։ Հետո ուզեց

ստորերկրյա դուռը ետ դնի, բայց էնքան ծանր էր, որ չկարողացավ պահի, ձեռիցը դուրս պրծավ ու մի էն տեսակ ահագին դնդյուն հանեց, կարծես միանգամից բազմաթիվ թնդանոթներ որոտացին, ու Իերգը հանկարծ ուշաթափ եղավ: Մին էլ ուշքի եկավ, տեսավ ինքը իրենց դռան հին ջաղացքարի վրա նստած, կողքին կանգնած իր թագուհին, միայն ոչ թե երազ, այլ մարմին առած, սովորական կին:

Իր ձեռիցը բռնած նա փաղաքշում էր իրեն ու խոսում. «Ա՛յ դու իմ ազնիվ, իմ բարի, իմ հիմար Իե՛րգ, ուրեմն էսքան ժամանակ սիրում էիր ինձ ու սի՞րտ չէիր անում ասե՛ս... վախենում էիր ինձանի՜ց...»

Լուսինը ելավ ու լուսափայլեց գետը, ալիքները հնչուն ծփալով զարկում էին ափերին, անտառը խուլ աղմկում էր, նրանք դեռ նստած խոսում էին ու խոսում: Հանկարծ լուսնի վրա մի սև ամպի պատառ եկավ, էս միջոցին նրանց ոտների տակ մեծ թաշկինակի պես մի բան ընկավ, ու նորից լուսինն սկսեց փայլել առաջվա պես պայծառ: Նրանք թաշկինակը վեր առան, ուզեցին բաց անեն, բայց տեսան, որ շատ է բարակ ու անթիվ անգամ ծալած, էնպես որ երկար տևեց, մինչև բոլոր ծալքերը բաց արին:

Ետ բաց արին՝ ի՜նչ տեսնեն, աշխարհագրական քարտեզի նման մի բան: Մեջտեղից մի գետ է հոսում, գետի երկու կողմը՝ քաղաքներ, անտառներ ու լճեր: Իսկույն գլխի ընկան, որ էս էն թագավորությունն է, որ բարի Երազների թագավորն իրենց համար ցած է գցում երկնքից: Եվ երբ ետ նայեցին իրենց փոքրիկ տնակին, տեսան դարձել է հոյակապ պալատ, բյուրեղյա աստիճաններով, մարմարե թավշածածկ պատերով ու բարձր աշտարակներով, փիրուզե տանիքներով: Ձեռ-ձեռի տված ներս մտան ու կորան ծաղիկների մեջ, անուշահոտ բուրմունքների, երաժշտության, ուրախության ու ամեն բանի լիության մեջ:

Մյուս օրը ամբողջ գյուղը դրըմբում էր, թե Երազող Իերգը վերադարձել է ու կին է բերել իրեն համար:

— Իրեն նման մի բան կլինի, էլի՜,— ասում էին չորս կողմից:

— Էսօր առավոտ անտառ էի գնում, տեսա շեմքումը կանգնած էր,— մեջ մտավ մի գյուղացի:— Բանի նման չի, կա էլի՜, մի լղար, պուճուր աղջիկ ա: Հագինն ու վրինն էլ հո

Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt *Der Vorstand*

էնպես...

— Բա ի՞նչ էր լինելու։ Սա բան չունի, նա էլ սրա նման,— նկատեց մի ուրիշը։

Էնպես էին խոսում էն տխմար մարդիկ, ու չէին տեսնում, որ առաջները կանգնածը թագուհի էր։ Ոչ էլ էն էին նկատում, որ նրանց տնակը շքեղ պալատ է դարձել։ Եվ ի՞նչպես պետք է տեսնեին։ Իերգի համար ամպերից ընկած թագավորությունը աներևույթ թագավորություն էր։ Ինքը՝ Իերգն էլ շատ չէր հոգում, թե ինչ են մտածում իր մասին կարճամիտ ու տխմար մարդիկ, ու իրեն համար ապրում էր իր թագավորության մեջ իր թագուհու հետ ուրախ ու բախտավոր։

Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt *Der Vorstand*

2. *ՄԻ ԿԱԹԻԼ ՄԵՂՐԸ (Հովհաննես Թումանյան)*

Մի գյուղացի իրենց գյուղում

Խանութ սարքել, բան էր ծախում։

Օրվան մի օր մոտիկ գյուղից,

Մահակն ուսին, շունն ետևից

Ներս է մտնում մի զըռ չոբան.

— Բարի օր քեզ, ա՛յ խանութպան,

Մեղրը չունե՞ս,

Մի քիչ տաս մեզ։

— Ունեմ, ունեմ, չոբան ախպեր.

Ամանդ ո՞ւր է, ամանըդ բեր,

Ինչ տեղից որ ինքդ կուզես,

Էս սըհաթին քաշեմ տամ քեզ։

Էսպես հանգիստ, էսպես սիրով,

Մեղրից անուշ լավ խոսքերով

Մեղր են քաշում. մին էլ հանկարծ

Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt *Der Vorstand*

Մի կաթ մեղրը ծորում է ցած։

— Տը՛զզ, էն կողմից մի ճանճ գալի,

Էս կաթիլին վեր է գալի։

Ճանճի վըրա, թաքուն-թաքուն,

Էս խանութի տիրոջ կատուն

Դուրս է ցատկում,

Թաթով զարկում...

Բայց հենց կատվի ցատկելու հետ

Հովվի շունը իսկույն ևեթ

Հաֆ է անում,

Վեր է կենամ,

Խեղճ փիսիկին

Դընում տակին,

Ձեռաց խեղդում

Ու շըպըրտում։

— Խեղդե՛ց, խեղդե՛ց, վա՛յ, իմ կատուն,

Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt *Der Vorstand*

Ա՛յ սատկես դու, շան որդու շուն,-

Բարկանում է խանութպանը

Ու ձեռն ընկած մոտիկ բանը

Տուր՝ թե կտաս շան ճակատին,

Շուռ է տալի կատվի կողքին։

— Վա՛յ, ձեզ մատա՛ղ, ասլան շունը,

Իմ ապրո՛ւստը, տե՛ղը, տո՛ւնը...

Տունը դանդվի, ա՛յ խանութպան,

Անխիղճ, լիրբ, չար, ֆըլան–ֆըստան,

Ո՞նց թե դու իմ շանը զարկե՛ս,

Դե, զարկելը հիմի դու տես...

Գոռում է մեր աժդահակը,

Մեծագլուխ իր մահակը

Ետ է տանում ու ցած բերում,

Խանութպանին շեմքում փըռում։

Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt *Der Vorstand*

— Ըսպանեցի՛ն... հա՛յ, օգնությո՛ւն...

Ու թաղից թաղ, ու տանից տուն

Ձեն է տալի մեկը մյուսին.

— Հա՛յ, օգնությո՛ւն... ըսպանեցի՛ն...

Վերի թաղից, ներքի թաղից,

Ճամփի վրրից, գործի տեղից,

Ճիչով, լալով,

Հարայ տալով,—

Էլ հերն ու մեր.

Քիր ու ախպեր,

Կին, երեխեք,

Ընկեր տրղեք,

Զոքանչ, աներ,

Քավոր, սանհեր,

Քեռի, փեսա...

Ինչ իմանաս էլ՝ ո՛վ է սա,

Գալիս են ու անվերջ գալիս,

Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt *Der Vorstand*

Ով գալիս է՝ տուր թե տալիս.

— Տո՛, կոպիտ արջ, տո՛, վայրենի,

Էս տեսակ էլ բա՞ն կըլինի.

Դու առուտուր եկար անես,

Թե՞ իր շեմքում մարդ ըսպանես...

Մին ասում են՝ տասը զարկում,

Աղցան անում, մեջտեղ ձըգում,

Իր շան կողքին երկար ու մեկ։

— Դե՛, ձեր մեռելն եկեք տարեք։

Ու էստեղից բոթը գընում,

Գընում մոտիկ գյուղն է հասնում.

— Հե՛յ, օգնեցե՛ք,

Մեռած հո չեք,

Ըսպանեցին մեր գյուղացուն...

Ինչպես շընաճանճի մի բուն

Քանդես, թողնես,

Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt *Der Vorstand*

Էն ճանճի պես

Ամբողջ գյուղով օրդու կապում,

«Բու՛հ» են անում, դուրս են թափում

Ամեն մինը առած մի բան.

Որը ձեռին մի հրացան,

Որը եղան, ցաքատ կամ սուր,

Որը թի, բահ, որը շամփուր,

Որը կացնով, որը փետով,

Որը ձիով, որը ոտով,

Որն անգըտակ, որը բոբիկ —

Դեպի դուշման գյուղը մոտիկ։

— Տո՛, էսպես էլ անիրավ գյո՛ւղ.

Ոչ խիղճ ունեն, ոչ ահ-երկյուղ.

Մարդ գընում է առուտուրի,

Հավաքվում են՝ քաշում սըրի։

Թո՛ւ ձեր գեղին, միջի մարդին,

Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt *Der Vorstand*

Ձեր նամուսին, ձեր աղաթին...

Գընա՛նք, զարկե՛նք,

Ջարդե՛նք, կրակե՛նք...

— Հա՛յ, հո՛ւյ, հառա՛ջ, դե՛ ձեզ տեսնե՛մ...

Ու դուրս եկան իրարու դեմ,

Հա՛ զարկեցին ու զարկեցին,

Կոտորեցին, կըրակեցին,

Ինչքան ավել կոտորեցին,

Էնքան ավել կատաղեցին,

Ջարդեցին իրար,

Ջընջեցին իրար,

Կորան, գընացին

Գետնին հավասար։

Դու մի՛ ասիլ, մեկը մեկից

Էսքան մոտիկ, սահմանակից

Էս գյուղերը հարկ են տալի

Ամեն մինը մի արքայի։

1. Vorsitzender: Armin Preuß
Tel.: 0176 - 345 11 323
2. Vorsitzende: Shushan Tumanyan
Schriftführer: Ishkhan Nazaryan
Schatzmeisterin: Lusine Shahramanyan
Jugendbeauftragte: Naira Galstyan
Bankverbindung:
Frankfurter Sparkasse
IBAN: DE91500502010000169417
BIC: HELADEF1822
Vorstand ist auch per E-Mail erreichbar: info@armenier-frankfurt.de
www.armenia.de

Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt *Der Vorstand*

Մի տերության թագավորը,

Երբ լսում է էս բոլորը,

Արձակում է հրրովարտակ

Ժողովրրդին իր հրպատակ.

— Հայտնի լինի մեր տերության,

Զինվոր, բանվոր, ազնըվական —

Ամեն շարքին

Ու աշխարհքին,

Որ անօրեն ու դավաճան

Մեր դրացի ազգը դաժան,

Երբ մենք քընած էինք սիրով,

Մեր սահմանը մըտավ զոռով,

Ու կոտորեց սուրը ձեռին

Մեր սիրելի զավակներին:

Արդ, սըրահար ու հրրակեզ

Մեր որդիքը կանչում են մեզ,

Եվ մենք, ընդդեմ մեր իսկ կամքին,

Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt *Der Vorstand*

Պատվեր տրվինք մեր բանակին,

Թընդանոթով մեր ավերող

Ու աստուծով մեծակարող,

Հանուն արդար ու սուրբ ոխի

Մրտնի հողը մեր ոսոխի:

Մյուսը նույնպես իրեն հերթին

Գրրեց զորքին, ժողովրդին.

Մարդկանց առաջ և աստրծու,

Բողոքում ենք մեր դրրացու

Վարմունքի դեմ և չար, և նենգ,

Որ ոտքելով ամեն օրենք,

Բորբոքում է կրռիվ ու վեճ

Հին հարևան ազգերի մեջ,

Քանդում սիրո դաշը կապած:

Արդ՝ ակամա մենք ըստիպված,

Հանուն պատվի, արդարության,

1. Vorsitzender: Armin Preuß
Tel.: 0176 - 345 11 323
2. Vorsitzende: Shushan Tumanyan
Schriftführer: Ishkhan Nazaryan
Schatzmeisterin: Lusine Shahramanyan
Jugendbeauftragte: Naira Galstyan
Bankverbindung:
Frankfurter Sparkasse
IBAN: DE91500502010000169417
BIC: HELADEF1822
Vorstand ist auch per E-Mail erreichbar: info@armenier-frankfurt.de
www.armenia.de

Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt *Der Vorstand*

Հանուն թափված անմեղ արյան,

Հանուն ազատ մեր աշխարհքի,

Հանուն աստծու և իր փառքի —

Բարձրացնում ենք մեր ձայնն ահա

Ու մեր սուրը նորա վրրա։

Ու ըսկսեց կրռիվն ահեղ։

Շռինդ, որոտ էստեղ, էնտեղ։

Կրրակն ընկավ շեն ու քաղաք,

Արյուն, ավեր, ճիչ, աղաղակ,

Ամեն կողմից սարսափ ու բոթ,

Ամեն կողմից մեռելի հոտ...

Ամառ, ձրմեռ,

Ողջ տարիներ

Մրշակն անբան,

Դաշտերն անցան,

Ու, կրռիվն չրդադարած,

Սովը եկավ համատարած։

1. Vorsitzender: Armin Preuß
Tel.: 0176 - 345 11 323
2. Vorsitzende: Shushan Tumanyan
Schriftführer: Ishkhan Nazaryan
Schatzmeisterin: Lusine Shahramanyan
Jugendbeauftragte: Naira Galstyan
Bankverbindung:
Frankfurter Sparkasse
IBAN: DE91500502010000169417
BIC: HELADEF1822
Vorstand ist auch per E-Mail erreichbar: info@armenier-frankfurt.de
www.armenia.de

Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt *Der Vorstand*

Սովը եկավ — սովի հետ ցավ,

Ծաղկած երկիրն ամայացավ...

Իսկ մնացած մարդիկ իրար

Հարցնում էին սարսափահար,

Թե ո՞րտեղից արդյոք ծագեց

Էս ընդհանուր աղետը մեծ։

Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt *Der Vorstand*

3. ՍԵՒՈՒԿ ՈՒԼԻԿԸ (Հովհաննես Թումանյան)

Խոր անտառում մի այծ է լինում: Ունենում է մի գեղեցիկ ուլ:

Ուլին ամեն օր թողնում է տանը, ինքը գնում է արոտ անելու: Արածում է և իրիկունը կուրծքը լիքը տուն է գալիս: Տուն է գալիս, դուռը զարկում ու մկրկում, կանչում.

Սևուկ ուլիկ,

Սիրուն բալիկ,

Ման եմ եկել սարեսար,

Կաթն եմ արել քեզ համար,

Դրռնակը բա՛ց, ներս գամ ես,

Անուշ-անուշ ծիծ տամ քեզ.

Սևուկ ուլիկ,

Սիրուն բալիկ:

Ուլիկն իսկույն վեր է թռչում, դուռը բաց անում: Մայրը ծիծ է տալիս նրան ու կրկին գնում արոտ:

Էս բոլորը թաքուն տեսնում է գայլը: Մի իրիկուն այծից առաջ գալիս է, դուռը զարկում ու իր հաստ ձայնով կանչում.

Սևուկ ուլիկ,

Սիրուն բալիկ,

Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt *Der Vorstand*

Ման եմ եկել սարեսար,

Կաթն եմ արել քեզ համար,

Դրոնակը բա՛ց, ներս գամ ես,

Անուշ-անուշ ծիծ տամ քեզ.

Սևուկ ուլիկ,

Սիրուն բալիկ:

Ուլիկը լսում է, լսում ու պատասխանում.

— Էդ ո՞վ ես դու, չեմ ճանաչում: Իմ մայրը էդպես չի կանչում: Նա քաղցր ու բարակ ձայն ունի: Քո ձայնը կոշտ է ու կոպիտ: Դուռը բաց չե՛մ անի... Գնա՛... Չեմ ուզում քեզ...:

Ու գայլը հեռանում է, գնում:

Գալիս է մայրը, դուռը ծեծում.

Սևուկ ուլիկ,

Սիրուն բալիկ,

Ման եմ եկել սարեսար,

Կաթն եմ արել քեզ համար,

Դրոնակը բա՛ց, ներս գամ ես,

Անուշ–անուշ ծիծ տամ քեզ.

Սևուկ ուլիկ,

Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt *Der Vorstand*

Սիրուն բալիկ։

Ուլիկը դուռը բաց է անում, ծիծ է ուտում ու մորը պատմում.

— Գիտե՞ս, մայրիկ, ի՛նչ եղավ։ Մի քիչ առաջ մինը եկավ, դուռը զարկեց ու կանչում էր.

Սևուկ ուլիկ,

Սիրուն բալիկ։

Ասում էր՝ դուռը բա՛ց արա։ Էնպե՛ս հաստ ձայն ունե՛ր։ Էնպե՛ս վախեցա՛, էնպե՛ս վախեցա՛... Դուռը բաց չարի, ասի՝ չեմ ուզում, գնա՛...

— Պա՛ պա՛, պա՛, պա՛, Սևուկ ջան, ի՛նչ լավ է եղել, որ բաց չես արել,— ասավ վախեցած մայրը։— Էդ գայլն է եղել, եկել է, որ քեզ ուտի։ Մյուս անգամ էլ որ գա, բաց չանես, ասա՝ գնա՛, թե չէ՝ իմ մայրը քեզ կսպանի իր սուր պոզերով։

Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt *Der Vorstand*

4. ԳԱՅԼՆ ՈՒ ԻՐ ՅՈԹ ՈՒԼԻԿՆԵՐԸ (Գրիմ Եղբայրներ)

Լինում է չի լինում, մի ծեր այծ է լինում: Ունենում է յոթ ուլիկ ու էնպես է սիրում իր փոքրիկներին, ինչպես կսիրի միայն մայրը: Մի անգամ, երբ ուզում է գնա անտառ կեր բերելու, կանչում է բոլոր ուլիկներին ու ասում.

— Սիրուն բալիկներ, ես գնում են անտառ, տեսեք, հա՛, զգույշ կմնաք գայլից: Որ նա մտավ այստեղ, ոչ մեկդ կենդանի չեք մնա: Այդ չարագործը երբեմն ձևացնում է, թե գայլ չէ, բայց նրա հաստ ձայնից ու սև-սև թաթերից դուք իսկույն կճանաչեք:

Ուլիկներն ասում են.

— Մի վախենա, մայրիկ, հանգիստ գնա, զգույշ կլինենք:

Ծեր այծը մկկում է ու խիղճը հանգիստ ճամփա ընկնում: Քիչ հետո մեկը ծեծում է դուռն ու կանչում.

— Սիրուն բալիկներ, բաց արեք դուռը, ձեր մայրն է եկել, համով-համով բաներ է բերել:

Բայց ուլիկները հաստ ձայնից անմիջապես ճանաչում են գայլին:

- Դուռը բաց չենք անի, դու մեր մայրը չես, մեր մայրիկի ձայնը նուրբ է ու բարի, իսկ քոնը հաստ է ու կոշտ: Դու գայլն ես:

Այդ ժամանակ գայլը գնում է խանութից մի մեծ կտոր կավիճ գնում, ուտում: Ձայնը բարակում է. նորից ետ է գալիս ծեծում դուռն ու ասում.

- Սիրուն բալիկներ, բաց արեք դուռը, ձեր մայրն է եկել, համով-համով բաներ է բերել:

Գայլն իր սև թաթը դնում է պատուհանին, ուլիկները տեսնում են ու ասում.

- Դուռը բաց չենք անի, մեր մայրիկի թաթերը սև չեն: Դու գայլն ես:

Այդ ժամանակ գայլը վազում է հացթուխի մոտ, ասում.

- Թաթս ջարդել եմ, մի քիչ խմոր քսիր վրան:

Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt *Der Vorstand*

Հացթուխը խմոր է քսում նրա թաթին: Հիմա էլ գայլը ջաղացպանի մատ է վազում ու ասում.

— Մի քիչ ալյուր ցանի թաթիս վրա:

Ջաղացպանը մտածում է. «Կա չկա, սա ինչ-որ մեկին ուզում է խաբել» ու չի համաձայնում: Գայլն ասում է.

— Եթե ալյուր չցանես թաթիս, քեզ կուտեմ:

Ջաղացպանը վախենում է, ալյուր է ցանում նրա թաթին: Այդպիսի մարդիկ էլ կան աշխարհում:

Չարագործը երրորդ անգամ է ծեծում այծի դուռն ու ասում.

- Սիրուն բալիկներ: Բաց արեք դուռը, ձեր մայրն է եկել, համով–համով բաներ է բերել ձեզ համար:

Այծիկներն ասում են.

— Նախ ցույց տուր թաթդ, տեսնենք մեր մայրն ես, թե չէ:

Գայլը թաթը դնում է պատուհանին, ուլիկները տեսնում են, որ սպիտակ է, նա ճիշտ է ասում, ու բացում են դուռը: Գայլը ներս է մտնում:

Վախից ուլիկները բոլորը թաքնվում են: Մեկը մտնում է սեղանի տակ, մյուսը բարձրանում է մահճակալի վրա, երրորդը՝ վառարանին, չորրորդը թաքնվում է խոհանոցում, հինգերորդը՝ պահարանում, վերցերորդը՝ լվացարանի տակ, յոթերորդը՝ պատի ժամացույցի մեջ: Բայց գայլը բոլորին գտնում է ու այլևսլ ժամանակ չի կորցնում, իրար ետևից ողջ-ողջ կուլ է տալիս բոլորին: Միայն փոքրիկին չի գտնում, որ թաքնվել էր ժամացույցի մեջ: Կուշտ ուտելուց հետո գայլը գնում է անտառ, մի ծառի տակ պառկում կանաչ խոտերի վրա ու քնում:

Շուտով այծը անտառից տուն է գալիս ու ի՜նչ տեսնի որ լավ լինի՝ դուռը կրնկի վրա բաց: Սեղանը, աթոռները շուռ տված, լվացարանը ջարդած, բարձերն ու վերմակները էս ու էն

Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt *Der Vorstand*

կողմ նետված։ Փնտրում է իր բալիկներին, չի գտնում։ Կանչում է, մեկ-մեկ ձայն տալիս, պատասխան չկա։ Վերջապես, երբ մոտենում է ժամացույցին՝ մի բարակ ձայն է լսում.

— Մայրիկ, ես ժամացույցի մեջ եմ։

Մայրը պատի ժամացույցի միջից հանում է փոքրիկին, սա պատմում է, թե գայլն ինչպես կերավ բոլորին։ Պատկերացրեք, թե խեղճ մայրն ինչ ողբ ու լաց է դնում իր բալիկների համար։ Վիշտը սրտում՝ այծը դուրս է գալիս տնից, փոքր ուլիկն էլ ետևից։

Գնում է անտառ, ի՜նչ տեսնի՝ գայլը պառկել է ծառի տակ ու էնպես է խռմփացնում, որ ծառի ճյուղերը դողդողում են։ Այծը մի լավ տնտղում է նրան, տեսնում է, որ ուռած փորի մեջ ինչ-որ բաներ են շարժվում, թպրտում։

«Տեր Աստվա՜ծ,— մտածում է այծը,— մի՞թե ուլիկներս դեռ ողջ են սրա փորի մեջ»։ Եվ ուլիկին պատվիրում է շուտ տուն վազի, մկրատ, թել ու ասեղ բերի։ Այծը մկրատով կտրում է գայլի փորը, հենց որ ճեղքը բացվում է, ուլիկներից մեկը գլուխը դուրս է հանում։ Այծը լայնացնում է ճեղքը, ուլիկները իրար ետևից դուրս եե թռչում, ողջ ու անվնաս։ Դու մի ասի ագահությունից գայլը նրանց առանց ծամելու է կուլ տվել։ Ա՜յ թե ուրախանում են։ Սկսում են թռչկոտել իրենց մայրիկի շուրջ, փաթաթվել նրան։ Բայց ծեր այծն ասում է.

— Շուտ արեք գնացեք, քարեր հավաքեք, լցնենք այս անիծյալի փորը, քանի դեռ չի արթնացել։

Յոթ ուլիկները շա՜տ, շա՜տ քար են հավաքում ու, ինչքան որ կարող են, լցնում են գայլի փորը։ Այծն էլ շտապ-շտապ կարում է նրա փորի ճեղքը։

Վերջապես գայլը արթնանում է, ոտքի ելնում, զգում է, որ շատ ծարավ է, գնում է ջրհորից ջուր խմելու։ Հենց որ տեղից շարժվում է, քարերը փորում գոգոռում են։ Գայլն ասում է.

— Այս ի՞նչ ղոռոց, գոռոց է,

Այս ի՜նչ աղմուկ իմ վարում,

Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt *Der Vorstand*

Ես ուլիկներ կուլ տվեցի,

Բայց քարեր են գոգոում։

Մոտենում է ջրհորին, կռանում որ խմի, բայց քարերի ծանրությունից գլխի վրա ընկնում է ջուրը, խեղդվում։ Ուլիկները տեսնում են, ուրախությունից թռչկոտալով վազում մոր մոտ, ասում.

- Գայլը խեղդվեց, գայլը խեղդվեց,— ու մոր հետ միասին յոթ ուլիկները պար են բռնում ջրհորի շուրջ։

1. Vorsitzender: Armin Preuß
Tel.: 0176 - 345 11 323
2. Vorsitzende: Shushan Tumanyan
Schriftführer: Ishkhan Nazaryan
Schatzmeisterin: Lusine Shahramanyan
Jugendbeauftragte: Naira Galstyan
Bankverbindung:
Frankfurter Sparkasse
IBAN: DE91500502010000169417
BIC: HELADEF1822
Vorstand ist auch per E-Mail erreichbar: info@armenier-frankfurt.de
www.armenia.de

Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt *Der Vorstand*

5. ՇՈՒՆՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ (Հովհաննես Թումանյան)

Ժամանակով Կատուն ճոն էր,

Շունն էլ գըլխին գըդակ չուներ,

Միայն, գիտեմ ոչ՝ որդիանց որդի,

Ճանկել էր մի գառան մորթի:

Եկավ մի օր, ձմեռվան մըտին,

Կատվի կուշտը տարավ մորթին:

— Բար' աջողում, ուստա Փիսո,

Գլուխըս մըրսեց, ի սեր Աստծո,

Ա՛ռ էս մորթին ու ինձ համար

Մի գդակ կարի գըլխիս հարմար:

Վարձիդ համար միամիտ մընա՛,

Համա-համա շատ չուշանա:

— Աչքիս վըրա, քեռի Քուչի,

Մի գըդակ ա, հո մի քուրք չի.

Քու թանկագին խաթեր համար

Ուրբաթ օրը համեցեք տար:

Փողի մասին ավելորդ ա,

Մեր մեջ խոսելն էլ ամոթ ա,

Ի՛նչ մեծ բան ա, տո՛, հե՛ր օրհնած,

Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt *Der Vorstand*

Միա՜յն, միա՜յն մի գդակի վարձ:

Ուրբաթ օրը քեռի Քուչին՝

Ուստից առաջ՝ բաց-բաց կուճին

Թափ-թափ տալով՝ ծանդրը ու մեծ,

Ուստա Կատվի շեմքում կանգնեց.

— Ուստեն ո՞ւր ա… փափախս ո՞ւր ա…

— Մի քիչ կացի, հրես կերևա:

II

Ուստեն եկավ քուրքը հագին,

Շանը տեսավ, բեղի տակին

Իրեն-իրեն քիչ փընթփընթաց,

Ու մուշտարու վըրա թընդաց.

— Ցուրտը տարա՞վ… վա՜հ, տընա՛շեն,

Չես թող անում մի շունչ քաշեն.

Հեշտ բան հո չի՞, հըլա նոր եմ

Ցըրցամ տըվել, թե որ կարեմ:

— Դե հե՛ր օրհնած, էտե՛նց ասա,

Էդ բարկանալդ էլ ընչի՞ս ա:

Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt *Der Vorstand*

Փող եմ տրվել, վախտին կարի,

Թե չէ՝ ասա, էգուց արի:

Համ ասում ես, համ չես կարում,

Համ խոսում ես, վըրես գոռում,

Հա՛մ, հա՛մ, հա՛մ, հա՛մ,

Քանի, ախպեր, գընամ ու գամ…

Ասավ Քուչին ու նեղացած

Վերադարձավ գլուխը բաց:

III

Մին էլ եկավ, դարձյալ չըկար.

Էս անգամը դիպան իրար.

Էլ անպատիվ, անկարգ խոսքեր,

Էլ հին ու նո՛ր, էլ հերն ու մե՛ր,

Էլ գող Փիսո՛, էլ քաչալ Շո՛ւն…

Բանը հասավ դիվանբաշուն:

Շունը մինչև գընաց, եկավ,

Ուստա Կատուն կոտըրն ընկավ,

Գըլուխն առավ ու մի գիշեր

Հայդե՛, կորավ. էն կորչիլն էր…

Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt *Der Vorstand*

IV

Էն օրվանից մինչև օրս էլ

Շունն էս բանը չի մոռացել,

Մըտքում հըլա դեռ պահում ա,

Որտեղ Կատվին պատահում ա,

Վեր ա թըռչում, վըրա վազում,

Իրեն մորթին ետ ա ուզում.

Իսկ սևերես Կատուն հանկարծ

Ետ ա դառնում ու բարկացած

Փըշտացնում ա. մըթամ նոր եմ

Ցըրցամ տըվել, թե որ կարեմ:

1. Vorsitzender: Armin Preuß
Tel.: 0176 - 345 11 323
2. Vorsitzende: Shushan Tumanyan
Schriftführer: Ishkhan Nazaryan
Schatzmeisterin: Lusine Shahramanyan
Jugendbeauftragte: Naira Galstyan
Bankverbindung:
Frankfurter Sparkasse
IBAN: DE91500502010000169417
BIC: HELADEF1822
Vorstand ist auch per E-Mail erreichbar: **info@armenier-frankfurt.de** **www.armenia.de**

Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt *Der Vorstand*

6. ԿԱՏՎԻ ՈՒ ՄԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ (Գրիմ եղբայրներ)

Մի անգամ մուկն ու կատուն ծանոթանում են:Կատուն այնքան է խոսում իր ընկերասիրության եւ հավատարմության մասին, որ մուկը համաձայնում է ապրել նրա հետ մի տան մեջ, միասին վարել տնտեսությունը:

-Հարկավոր է ձմռան պաշար հավաքել, թե չէ ցրտերը որ ընկան, սովից կսատկենք, - ասում է կատուն,- համ էլ, այո, դու էլ շատ դեռ ու դեն չես գնա, թե չէ աստված չանի, մի փորձանքի կը գաս, թակարդը կընկնես:

Էդպես որոշում են ու ձմռան համար մի կճուճ ճարպ են գնում: Բայց որտե՞ղ պահեն կճուճը, որ ապահով լինի: Երկար մտածելու հետո կատուն ասում է.

-Եկեղեցուց ապահով տեղ չկա՛: Այնտեղից ոչ ոք չի համարձակվի գողանալ: Արի կճուճը թաքցնենք բեմի տակ:

Այդպես էլ անում են: Շատ ժամանակ է անցնում թե քիչ, աստված գիտի, մեկ էլ կատվի սիրտը ճարպ է ուզում:

-Գիտե՞ս ինչ կա, մո՛ւկ, մորաքույրս ինձ կնունքի է կանչել. Տղա է ունեցել: Սպիտակ ձագուկ է, շեկ պտերով: Պետք է քավոր կանգնեմ: Ես գնամ, դու տիրություն արա այստեղ:

- Լավ,- ասում է մուկը,- բարով գնաս, համով բան կը լինի, ինձ էլ չմոռանաս: Ես էլ դեմ չեմ լինի մի քիչ կարմիր քաղցր գինի կոնծելու:

Բայց կատուն սուտ էր ասում: Ո՛չ մորաքույր ուներ, ո՛չ էլ նրան կնունքի էին կանչել: Նա ուղիղ գնում է եկեղեցի, ճարպով լի կճուճը հանում ու սկսում լպստել: Լպստում է, լպստում էնքան, որ կճուճը կիսատվում է: Հետո իր քեֆին ման է գալիս տանիքների վրա, աչք ածում շուրջը, պառկում արեւի տակ ու, հիշելով կճուճի ճարպը, բեղերը լպստում: Իրիկնադեմին տուն է գալիս:

Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt *Der Vorstand*

-Եկար վերջապես,- ասում է մուկը,- երեւի լավ ժամանակ անցկացրիր:

-Հա, ոչինչ վատ չէր,- պատասխանում է կատուն:

-Երեխայի անունն ի՞նչ դրիր,- հարցնում է մուկը:

- Կիսատու,- սառը պատասխանում է կատուն:

-Կիսատու՞,- զարմանում է մուկը,- էդ ինչ տարօրինակ ու չլսված անուն է,- մի՞թէ ձեր տոհմի մեջ ընդունված է այդ անունը:

- Հապա ի՞նչ ես կարծում,- պատասխանում է կատուն,- համենայնդեպս, ավելի լավ է, քան «հացի փշրանք գողացող», ինչպես քո սանիկներին են անվանում:

Շուտով կատվի սիրտն էլի է ճարպ ուզում: Նա մկանն ասում է.

-Բարի եղիր, էս անգամն էլ մնա տանը: Ինձ էլի կնունքի են հրավիրում: Ոչ մի կերպ չեմ կարող մերժել, ախր ձագուկը ճերմակ օձիքավոր է ծնվել:

Բարի մուկը նորից համաձայնում է: Իսկ կատուն քարի պարսպի վրայով հասնում է եկեղեցի ու կճուճի մեջ մնացած ճարպի կեսն էլ է ուտում: «Մենակ ուտելուց համով բան չկա՛»,- մտածում է նա ու շատ գոհ մնում իր բռնած գործից:

Երբ տուն է գալիս, մուկը հարցնում է.

-Հը՞, երեխայի անունը ի՞նչ դրիր:

-Միջնամասու:

-Միջնամասու՞, կյանքումս առաջին անգամ եմ այդպիսի անուն լսում: Գրազ կգամ, որ օրացույցում էլ գրված չի այդ անունը:

Շուտով կատուն նորից է հիշում համեղ պատառը:

Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt *Der Vorstand*

-Լավ բանը երեք անգամից է լինում,- ասում է նա մկանը,- ստիպված եմ էլի քավոր կանգնել: Ձագն ամբողջապես սեւ է ծնվել, միայն թաթերն են ճերմակ, էլ ուրիշ ճերմակ տեղ չկա վրան: Էդպիսի բան մի քանի տարին մի անգամ է պատահում: Էս անգամ էլ թող գնամ կնունքի:

-Կիսատու, Միջնամասուկ,- ասում է մուկը,- ի՜նչ տարօրինակ անուններ են, զարմանալու բան է:

- Ախր ամբողջ օրը մազերդ կապած գլխիդ նստած ես տանը: Տնից դուրս ե՞ս գալիս, որ իմանաս ինչ կա աշխարհում, ինչ չկա:

Կատուն գնում է: Մուկը հավաքում, մաքրում է տունը, ամեն ինչ կարգի բերում: Իսկ կատուն այդ ժամանակ ուտում է կճուճի մեջ մնացած ճարպը, մաքուր լպստում: «Որ ուտում ես բոլորը վերջացնում, սիրտդ հանգստանում է»- ասում է նա ինքն իրեն:

Տուն է գալիս ուշ երեկոյան՝ կերած ու կուշտ: Մուկն անմիջապես հարցնում է.

-Էս երրորդի անունն ի՞նչ դրիք:

-Քեզ էդ անունն էլ դուր չի գա,- ասում է կատուն,- Կճուճքերանք դրինք:

-Կճուճքերա՞նք,- զարմանում է մուկը,- հըը, զարմանալի բան է: Ես դեռ ոչ մի տեղ չեմ լսել, որ այդ անունը լինի: Կճուճքերա՞նք, տեսնես ի՞նչ է նշանակում,- գլուխն օրօրում է մուկը, գունդուկծիկ դառնում ու քնում:

Դրանից հետո ոչ ոք կատվին այլեւս կնունքի չի հրավիրում: Ձմեռը վրա է հասնում, այլեւս ուտելիք չի ճարվում: Մուկը հիշում է իրենց պաշարն ու ասում.

-Գնանք ճարպի կճուճը բերենք, ա՛յ կատու, էլ ո՞ր օրվա համար ենք պահել:

Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt *Der Vorstand*

-Ինչ կա որ,- ասում է կատուն,- գնանք: Դա օդ լպստելու նման մի բան կլինի:

Ճամփա են ընկնում: Հասնում են եկեղեցի, ի՜նչ տեսնեն. Կճուճը կա, ճարպը չկա, դատարկ է:

-Վա՜յ,- ասում է մուկը,- հիմա եմ տեսնում թե ինչ պտուղն ես, հիմա եմ տեսնում հավատարմությունդ: Դու՛, դո՛ւ ես կերել բոլորը եւ էն ժամանակ ես կերել, երբ կնունքի էիր գնում: Նախ կիսատել ես, հետո միջնամասն ես կերել, հետո էլ....

-Ձենդ կտրիր,- գոռում է կատուն,- որ մի խոսք էլ ասել ես, քեզ եմ ուտելու:

«Կճուճկերանք» բառը մկան լեզվի ծայրին էր մնացել: Հենց որ բերանից դուրս է թռչում, կատուն վրա է հասնում ու ուտում խեղճ մկանը:

Այ թե ինչպիսի բաներ են լինում աշխարհում:

Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt *Der Vorstand*

7. ՔԱՋ ՆԱԶԱՐԸ (Հովհաննես Թումանյան)

1

Լինում է, չի լինում՝ մի խեղճ մարդ, անունը՝ Նազար։ Էս Նազարը մի անշնորհք ու ալարկոտ մարդ է լինում. է՛նքան էլ վախկոտ, է՛նքան էլ վախկոտ, որ մենակ ոտը ոտի առաջ չէր դնիլ, թեկուզ սպանեիր։ Օրը մինչև իրիկուն կնկա կողքը կտրած՝ նրա հետ դուրս գնալիս դուրս էր գնում, տուն գալիս՝ տուն գալի։ Դրա համար էլ անունը դնում են Վախկոտ Նազար։

Էս Վախկոտ Նազարը մի գիշեր կնկա հետ շեմքն է դուրս գալի։ Որ շեմքն է դուրս գալի, տեսնում է ճրըքճրըքան լո՛ւս—լուսնյակ գիշեր, ասում է.

— Ա՛յ կնիկ, ի՛նչ քարվան կտրելու գիշեր է՛… Սիրտս ասում է՝ վեր կաց գնա Հնդստանից եկող Շահի քարվանը կտրի, բեր տունը լցրու…

Կնիկը թե՝

— Ձենդ կտրի, տեղդ նստի, քարվան կտրողիս մտիկ արա…։

Նազարը թե՝

— Անզգա՛մ կնիկ, ինչո՞ւ չես թող անում՝ ես գնամ քարվան կտրեմ, բերեմ տունը լցնեմ։ Էլ ի՞նչ տղամարդ եմ ես, էլ ինչո՞ւ եմ գդակ ծածկում, որ դու համարձակվում ես իմ առաջը խոսես։

Որ շատ կռվում է, կնիկը տուն է մտնում, դուռը փակում։

— Հո՛ղեմ էդ վախկոտ գլուխդ, դե հիմի գնա քարվան կտրի։ Էս Նազարս մնում է դռանը։ Վախից լեղապատառ է լինում։ Ինչքան աղաչում—պաղատում է, որ կնիկը դուռը բաց անի, չի լինում, բաց չի անում։ Ճարը կտրած՝ գնում է մի պատի տակի կուչ է գալի, դողալով գիշերն անց է կացնում, մինչև լուսը բացվում է։ Նազարը խռոված, պատի տակին արևկող արած սպասում է, որ կնիկը գա, տուն տանի, ու միտք է անում։ Ամառվա շոգ օ՛ր՝ գազազած ճանճեր, ինքն էլ էնքան ալարկոտ, որ ալարում է քիթը սրբի—ճանճերը գալիս են սրա քիթ ու պռունգին վեր գալի, լցվում։ Որ շատ նեղացնում են, ձեռը

տանում է, երեսին զարկում: Որ երեսին զարկում է, ճանճերը ջարդվում են, առաջին վեր թափում:

— Վա՛հ, էս ինչ էր…— մնում է զարմացած:

Ուզում է համրի, թե մի զարկով քանիսն սպանեց, չի կարողանում: Մտածում է, որ հազարից պակաս չի լինիլ:

— Վա՛հ,— ասում է,— ես էսպես տղամարդ եմ էլել ու մինչև էսօր չեմ իմացե՛լ… Ես, որ մի զարկով կարող եմ հազար շունչ կենդանի ջարդել, էլ ի՞նչ եմ էս անպիտան կնկա կողքին վեր ընկել…:

Էստեղից վեր է կենում, ուղիղ գնում իրենց գյուղի տերտերի մոտ:

— Տե՛րտեր, օրհնյա ի տեր:

— Աստված օրհնի, որդի՛ս:

— Տե՛րտեր, բա չես ասիլ էսպես—էսպես բան: Պատմում է իր քաջագործությունը ու հետն էլ հայտնում է, որ պետք է իր կնկանից կորչի, միայն խնդրում է՝ իր արածը տերտերը գրի, որ անհայտ չմնա, ամենքն էլ կարդան, իմանան: Տերտերն էլ, կատակի համար, մի փալասի կտորի վրա գրում է.

Անհաղթ հերոս Քաջըն Նազար,

Որ մին զարկի՝ ջարդի հազար:

Ու տալիս է իրեն:

Նազարս էս փալասի կտորը մի փետի ծերի ամրացնում է, մի ժանգոտած թրի կտոր կապում մեջքը, իրենց հարևանի իշին նստում ու գյուղից հեռանում:

2

Իրենց գյուղից դուրս է գալի, մի ճամփա է ընկնում ու գնում: Ինքն էլ չի իմանում, թե էդ ճամփեն ուր է տանում:

Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt *Der Vorstand*

Գնում է, գնում, մին էլ ետ է նայում, տեսնում է՝ գյուղից հեռացել է։ Էստեղ սիրտն ահ է ընկնում։ Իրեն սիրտ տալու համար սկսում է քթի տակին մռմռալ, երգել, իրեն—իրեն խոսել, իշի վրա բարկանալ։ Քանի հեռանում է, էնքան վախը սաստկանում է, քանի վախը սաստկանում է, էնքան ձենը բարձրացնում է, սկսում է գոռգոռալ, հարայ—հրոց անել, հետն էլ մյուս կողմից էշն է սկսում գռալ… Էս աղմուկից ու աղաղակից թռչունները մոտիկ ծառերից են թռչում, նապաստակները թփերից են փախչում, գորտերը կանանչիցն են ջուրը թափում…

Նազարը ձենն ավելի է գլուխը գցում. իսկ որ մտնում է անտառը, թվում է, թե ամեն մի ծառի տակից, ամեն մի թփի միջից, ամեն մի քարի ետևից որտեղ որ է՝ գազան է հարձակվելու կամ ավազակ, սարսափած սկսում է գոռգոռալ, ո՜նց գոռգոռալ՝ ականջդ ոչ լսի։

Դու մի՛ ասիլ՝ հենց էս ժամանակ մի գյուղացի ձին քաշելով՝ անտառում միամիտ գալիս է։ Էս զարհուրելի ձենը ականջն է ընկնում թե չէ՝ կանգնում է։

—Վա՛յ,— ասում է,— ո՞նց թե, իմն էլ էստեղ էր հատե՛լ, կա—չկա՝ էս ավազակներ են…

Ձին թողնում է, ընկնում է ճամփի տակի անտառն ու երկու ոտն ուներ, երկուսն էլ փոխ է առնում, փախչում։

Բախտդ սիրեմ, Քաջ Նազար. գոռգոռալով գալիս է տեսնում՝ մի թամքած ձի ճամփի մեջտեղը կանգնած, իրեն է սպասում։ Իշիցը վեր է գալի էս թամքած ձիուն նստում ու շարունակում իր ճամփեն։

3

Շատ է գնում, քիչ է գնում, շատն ու քիչն էլ ինքը կիմանար, գնում է ընկնում մի գյուղ, ինքը՝ գյուղին անծանոթ, գյուղն՝ իրեն։ Ո՞ւր գնա, ուր չի գնա։ Մի տանից զուռնի ձեն է լսում. ձին քշում է էս ձենի վրա, գնում է ընկնում մի հարսանքատուն։

— Բարի օր ձեզ։

— Ա՛յ աստծու բարին քեզ. բարով հազար բարի եկար։

Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt *Der Vorstand*

Համե՛ցեք, հա, համե՛ցեք. դե ղոնախն առտծունն է. սրան տանում են իր դրոշակով սուփրի վերի ծերին բազմեցնում: Աչքդ էն բարին տեսնի, ինչ որ լցնում են առաջը՝ թե՛ ուտելիք, թե՛ խմելիք:

Հարսանքավորները հետաքրքրվում են իմանան, թե ո՞վ է էս տարօրինակ անծանոթը: Ներքի ծերից մինը բոթում է իր կողքի նստածին ու հարցնում, սա էլ իր կողքի նստածին է բոթում, էսպես հերթով իրար բոթելով ու հարցնելով բանը մնում է վերի ծերին նստած տերտերին: Տերտերը մի կերպով ղոնախի դրոշակի վրա կարդում է.

Անհաղթ հերոս Քաջըն Նազար,

Որ մին զարկի՝ ջարդի հազար:

Կարդում է ու զարհուրած հայտնում է իր կողքի նստածին, սա էլ՝ իր կողքի նստածին, սա էլ՝ երրորդին, երրորդը՝ չորրորդին. էսպեսով հասնում է մինչև դռան տակը, ու ամբողջ հարսանքատունը դրմբում է թե՝ բա չես ասիլ, նորեկ ղոնախն է ինքը՝

Անհաղթ հերոս Քաջըն Նազար,

Որ մին զարկի՝ ջարդի հազար

— Քաջ Նազարն է, հա՛…— բացականչում է պարծենկոտի մինը,— ի՛նչքան է փոխվել, միանգամից լավ չճանաչեցի…

Եվ մարդիկ են գտնվում, որ պատմում են նրա արած քաջագործությունները, հին ծանոթությունն ու միասին անցկացրած օրերը:

— Հապա ի՞նչպես է, որ էսպես մարդը հետը ոչ մի ծառա չունի,— զարմանքով հարցնում են անծանոթները:

— Էդպես է դրա սովորությունը, ծառաներով ման գալ չի սիրում: Մի անգամ ես հարցրի, ասավ՝ ծառան ինչ եմ անում, ամբողջ աշխարհքն իմ ծառան է ու իմ ծառան: — Հապա ի՞նչպես է, որ մի կարգին թուր չունի, էս ժանգոտ երկաթի կտորն է մեջքին կապել:

— Շնորհքն էլ հենց դրա մեջն է, է՛, որ էս ժանգոտ երկաթի կտորով մին զարկես, ջարդես

Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt *Der Vorstand*

հազար, թե չէ՝ լավ թրով ի՞նչ կա որ, սովորական քաջերն էլ են ջարդում։

Ու ապշած ժողովուրդը ոտի է կանգնում, խմում է Քաջ Նազարի կենացը։ Իրենց միջի խելոքն էլ դուրս է գալի, ճառ է ասում Նազարի առաջ. ասում է՝ մենք վաղուց էինք լսել քո մեծ հռչակը, կարոտ էինք երեսդ տեսնելու և ահա էսօր բախտավոր ենք, որ քեզ տեսնում ենք մեր մեջ։ Նազարը հառաչում է ու ձեռքը թափ է տալի։ Ժողովրդականները խորհրդավոր իրար աչքով են անում, հասկանում են, թե էդ հառաչանքն ու ձեռքի թափ տալը ինչքան բան կնշանակեր…

Աշուղն էլ, որ էնտեղ էր, ձեռաց երգ է հորինում ու երգում։

Բարով եկար, հազար բարի,

Հըզոր արծիվ մեր սարերի,

Թագ ու պարծանք մեր աշխարհի,

Անհաղթ հերոս Քաջըդ Նազար,

Որ մին զարկես՝ ջարդես հազար։

Խեղճ տըկարին դու ապավեն,

Ազատ կանես ամեն ցավեն,

Մեզ կըփրկես անիրավեն,

Անհաղթ հերոս Քաջըդ Նազար,

Որ մին զարկես՝ ջարդես հազար։

Մատաղ ենք մենք քո դըրոշին,

Մեջքիդ թըրին, տակիդ ռաշին,

Նրա ոտին, պոչին, բաշին,

Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt *Der Vorstand*

Անհաղթ հերոս Քաջըդ Նազար,

Որ մին զարկես՝ ջարդես հազար։

Ու ցրվելով՝ հարբած հարսանքավորները տարածում են ամեն տեղ, թե գալիս է

Անհաղթ հերոս Քաջըն Նազար,

Որ մին զարկի՝ ջարդի հազար։

Պատմում են նրա զարմանալի քաջագործությունները, նկարագրում են նրա ահռելի կերպարանքը։ Ու ամեն տեղ իրենց նորածին երեխաների անունը դնում են Քաջ Նազար։

4

Հարսանքատանից հեռանում է Նազարն ու շարունակում է իր ճամփեն։ Գնում է հասնում մի կանանչ դաշտ։ Էս կանանչ դաշտում ձին թողնում է արածի, դրոշակը տնկում է, ինքն էլ դրոշակի շվաքումը պառկում քնում։

Դու մի՛ ասիլ՝ օխտը հսկա եղբայրներ կան, օխտը ավազակապետ, էս տեղերը նրանցն են, իրենց ամրոցն էլ մոտիկ սարի գլխին է։ Էս հսկաները վերևից մտիկ են տալիս, որ մի մարդ եկել է իրենց հանդում վեր է եկել։ Շատ են զարմանում, թե էս ինչ սրտի տեր մարդ պետք է լինի, քանի գլխանի, որ առանց քաշվելու եկել է իրենց հանդում հանգիստ վեր եկել ու ձին էլ բաց թողել։ Ամեն մինը մի գուրզ ուներ քառասուն լդրանոց։ Էս քառասուն լդրանոց գուրզները վերցնում են գալի։ Գալիս են, ի՞նչ են տեսնում. հրես մի ձի արածում է, մի մարդ կողքին քնած, գլխավերևը մի դրոշակ տնկած, դրոշակի վրեն գրած.

Անհաղթ հերոս Քաջըն Նազար,

Որ մին զարկի՝ ջարդի հազար։

Վա՜յ, Քաջ Նազարն է՜… Մատները կծում են հսկաներն ու մնում են տեղները սառած։ Դու մի՛ ասիլ հարբած հարսանքավորների տարածած լուրը սրանց էլ է լինում հասած։ Էսպես թուքները ցամաքած, չորացած սպասում են, մինչև Նազարն իր քունն առնում է ու զարթնում. որ զարթնում է, աչքերը բաց է անում տեսնում՝ գլխավերևը քառասուն

Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt *Der Vorstand*

լրդրանոց գուրզները ուսներին օխտն ահռելի հսկաներ կանգնած՝ էլ փորումը սիրտ չի մնում։ Մտնում է իր դրոշակի ետևն ու սկսում է դողալ, ոնց որ աշունքվա տերևը կդողա։ Էս հսկաները որ տեսնում են՝ սա գունատվեց ու սկսեց դողալ, ասում են՝ բարկացավ, հիմի որտեղ որ է՝ մի զարկով օխտիս էլ կսպանի, առաջին գետին են փռվում ու խնդրում են.

— Անհաղթ հերոս Քաջըդ Նազար,

Որ մին զարկես՝ ջարդես հազար,

Մենք լսել էինք քո ահավոր անունը, տեսությանդ էինք փափագում. այժմ բախտավոր ենք, որ քո ոտով ես եկել մեր հողը։ Մենք՝ քո խոնարհ ծառաներդ, օխտն ախպեր ենք, ահա մեր ամրոցն էլ էն սարի գլխին է, մեջը՝ մեր գեղեցիկ քույրը։ Աղաչում ենք՝ շնորհ անես, գաս մեր հացը կտրես…

Էստեղ Նազարի շունչը տեղն է գալի, նստում է իր ձին, նրանք էլ դրոշակն առած՝ առաջն են ընկնում ու հանդիսավոր տանում են իրենց ամրոցը։ Տանում են, ամրոցում պահում, պատվում թագավորին վայել պատվով ու էնքան են խոսում նրա քաջագործություններից, էնքան են գովում, որ իրենց գեղեցիկ քույրը սիրահարվում է վրեն։ Ինչ ասել կուզի՝ հարգն ու պատիվն էլ հետն ավելանում է։

5

Էս ժամանակ մի վագր է լուս ընկնում էս երկրում ու սարսափ է գցում ժողովրդի վրա։ Ո՞վ կսպանի վագրին, ո՞վ չի սպանիլ։ Իհարկե, Քաջ Նազարը կսպանի։ Էլ ո՞վ սիրտ կանի վագրի դեմ գնա։ Ամենքն էլ Նազարի երեսին են մտիկ տալի, վերևը՝ մի աստված, ներքևը՝ մի Քաջ Նազար։

Վագրի անունը լսելուն պես Նազարը վախից դուրս է վազում, ուզում է փախչի, ետ գնա իրենց տունը, իսկ կանգնածները կարծում են, թե վազում էր, որ գնա վագրին սպանի։ Նշանածը բռնում է, կանգնեցնում, թե՝ ո՞ւր ես վազում էդպես առանց զենքի, զենք առ հետդ, էնպես գնա։ Զենք է բերում տալիս իրեն, որ գնա իր փառքի վրա մի քաջություն էլ ավելացնի։ Նազարը զենքն առնում է, դուրս գնում։ Գնում է, անտառում մի ծառի

բարձրանում, վրեն տապ անում, որ ոչ ինքը վագրին պատահի, ոչ վագրը՝ իրեն։ Ծառի վրա կուչ է գալի ու Նազարն ո՞վ կտա— հոգին դառել է կորկի հատ։ Հակառակի նման անտեր վագրն էլ գալիս է, հենց էս ծառի տակին պառկում։ Նազարը որ վագրին չի տեսնո՛ւմ, լեղին ջուր է կտրում, աչքերը սևանում են, ձեռն ու ոտը թուլանում են ու, թրը՛մփ, ծառիցը ընկնում է գազանի վրա։ Վագրը սարսափած տեղիցը վեր է թռչում, Նազարն էլ վախից կպչում է սրա մեջքին։ Էսպես զարհուրած Նազարը մեջքին կպած՝ էս խրտնած վագրը փախչում է, ո՛նց է փախչում, էլ սար ու ձոր, քար ու քոլ չի հարցնում։

Մարդիկ մին էլ տեսնում են, վա՛հ, Քաջ Նազարը վագրին նստած քշում է։

— Հա՛յ—հարա՛յ, եկե՛ք, հա եկե՛ք, Քաջ Նազարը վագրին ձի է շինել, հեծել… տվե՛ք, հա տվե՛ք…

Սրտավորվում են, ամենքը մի կողմից հարայ—հրոցով, հռհռոցով հարձակվում են՝ խանչալով, թրով, թվանքով, քարով, փետով տալիս են սպանում։

Նազարը որ ուշքի է գալի, լեզուն բացվում է. «Ափսո՛ս,— ասում է,— ընչի՞ սպանեցիք, զոռով մի ձի էի շինել, նստել… էնքան պետք է քշեի ո՛ր…»։

Լուրը գնում է, հասնում է ամրոցը։ Մարդ, կին, մեծ, պստիկ՝ ժողովուրդը դուրս է թափում Նազարին ընդունելու։ Վրեն երգ են կապում ու երգում։

Էս աշխարհքում,

Մարդկանց շարքում

Ո՞վ կըլինի քեզ հավասար,

Ո՛վ Քաջ Նազար։

Ինչպես ուրուր,

Կայծակ ու հուր,

Բարձր բերդից թռար հասար,

Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt *Der Vorstand*

Ո՜վ Քաջ Նազար։

Ահեղ վագրին

Արիր քո ձին,

Հեծար անցար դու սարեսար,

Ո՜վ Քաջ Նազար։

Մեզ փրկեցիր,

Ազատեցիր,

Փառք ու պարծանք քեզ դարեդար,

Ո՜վ Քաջ Նազար։

Ու պսակեցին Քաջ Նազարին հսկաների գեղեցիկ քրոջ հետ, օխտն օր, օխտը գիշեր հարսանիք արին, երգերով գովեցին թագավորին ու թագուհուն։

- Լուսընկան նոր սարն ելավ,

Էն ո՞ւմ նըման էր։

- Լուսընկան նոր սարն ելավ,

Էն Քաջ Նազարն էր։

- Արեգակ նոր շաղեշաղ,

Էն ո՞ւմ նըման էր։

- Արեգակ նոր շաղեշաղ,

Էն իր նազարն էր։

Մեր թագավորն էր կարմիր,

Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt *Der Vorstand*

Իրեն արևն էր կարմիր,

Թագն էր կարմիր, հա՛յ կարմիր,

Կապեն կարմիր, հա՛յ կարմիր,

Գոտին կարմիր, հա՛յ կարմիր,

Սոլեր կարմիր, հա՛յ կարմիր,

Թագուհին կարմիր, հա՛յ կարմիր,

Կարմիր թագուհուն բարև,

Կարմիր թագվորին արև։

Շնորհավոր, շնորհավոր,

Քաջ Նազարին շնորհավոր,

Իր նազ–յարին շնորհավոր,

Ողջ աշխարհին շնորհավոր։

6

Դու մի՛ ասիլ էս աղջկանը ուզած է լինում հարևան երկրի թագավորը։ Որ իմանում է՝ իրեն չեն տվել, ուրիշի հետ են ամուսնացրել, զորք է կապում, պատերազմով գալիս է օխտն ախպոր վրա։

Էս օխտը հսկան գնում են Քաջ Նազարի մոտ, պատերազմի լուրը հայտնում են, գլուխ են տալի, առաջը կանգնում, հրաման են խնդրում։

Պատերազմի անունը որ լսում է, սարսափում է Նազարը. դուրս է պրծնում, որ փախչի, ետ գնա իրենց գյուղը։ Մարդիկ կարծում են՝ ուզում էր իսկույն դուրս վազել, հարձակվել թշնամու բանակի վրա։ Առաջն են ընկնում, բռնում են, խնդրում, թե՝ ախր առանց զենքի ու զրահի մենակ ո՞ւր ես գնում, ի՞նչ ես անում, գլխիցդ ձեռք ես վերցրել, ի՞նչ է…

Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt *Der Vorstand*

Բերում են, զենք ու զրահ են տալի, կնիկն էլ եղբայրներին խնդրում է, որ չթողնեն Նազարին՝ իր քաջությունից տարված մենակ հարձակվի թշնամու զորքի վրա: Եվ լուրը գնում տարածվում է զորքի ու ժողովրդի մեջ, լրտեսների միջոցով էլ հասնում է թշնամուն, թե՝ Քաջ Նազարը մենակ, առանց զենքի թռչում էր դեպի պատերազմի դաշտը, հազիվ են կարողացել զսպել ու շրջապատած բերում են…

Պատերազմի դաշտում մի ամեհի նժույգ ձի են բերում, Նազարին նստեցնում վրեն: Ոգևորված զորքն էլ հետը վեր է կենում ահագին աղմուկով. «Կեցցե՛ Քաջն Նազա՛ր… մա՛հ թշնամո՛ւն…»:

Նազարի տակի նժույգը, որ տեսնում է՝ վրեն ինչ անպետքի մինն է նստած, խրխնջում է, գլուխն առնում ու թռչում առաջ, ուղիղ դեպի թշնամու բանակը: Զորքերը կարծում են՝ Քաջ Նազարը հարձակվեց, ուռռա՛ են կանչում ու իրենք էլ ետևից հարձակվում ամենայն սաստկությամբ: Նազարը որ տեսնում է՝ չի կարողանում իր ձիու գլուխը պահի, քիչ է մնում վեր ընկնի, ձեռը զցում է, ուզում է մի ծառից փաթաթվի, դու մի՛ ասիլ՝ ծառը փտած է, մի գերանաչափ ճյուղը պոկ է գալիս, մնում ձեռին: Թշնամու զորքերը, որ առաջուց համբավը լսել էին, ու ահը սրտներումն էր, էս էլ որ իրենց աչքով տեսնում են՝ էլ փորներումը սիրտ չի մնում, երես են շուռ տալիս,— փախի՛, որ փախի՛, թե մարդ ես՝ գլուխդ պրծացրու, որ Քաջ Նազարը ծառերն արմատահան անելով, գալիս է… Էդ օրը թշնամուց ինչքան կոտորվում է՝ կոտորվում, մնացածները թուրները դնում են Քաջ Նազարի ոտի տակին, հայտնում են իրենց հպատակությունն ու հնազանդությունը:

Ու պատերազմի ահեղ դաշտից Քաջ Նազարը հսկաների ամրոցն է վերադառնում: Ժողովուրդը հաղթական կամարներ է կապում, աննկարագրելի ոգևորությամբ, ուռաներով և կեցցեներով, երգով ու երաժշտությունով, աղջիկներով ու ծաղիկներով, պատգամավորություններով ու ճառերով առաջն է դուրս գալի, էնպես մի փառք ու պատիվ, որ Նազարը մնացել էր ապշած, շշկլված:

Էսպես առքով—փառքով էլ բերում, հրատարակում են իրենց թագավոր ու բազմեցնում են թագավորի թախտին: Քաջ Նազարը դառնում է թագավոր, էն հսկաներից ամեն մեկին էլ մի պաշտոն է տալիս: Մին էլ տեսնում է՝ աշխարհքը իր բռան մեջ:

Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt *Der Vorstand*

Ասում են՝ մինչև էսօր էլ դեռ ապրում ու թագավորում է Քաջ Նազարը։ Ու երբ քաջությունից, խելքից, հանճարից մոտը խոսք են գցում, ծիծաղում է, ասում է.

— Ի՜նչ քաջություն, ի՜նչ խելք, ի՜նչ հանճար. դատարկ բաներ են բոլորը։ Բանը մարդուս բախտն է։ Բախտ ունե՞ս՝ քեֆ արա…

Եվ ասում են՝ մինչև էսօր էլ քեֆ է անում Քաջ Նազարը ու ծիծաղում է աշխարհքի վրա։

1. Vorsitzender: Armin Preuß
Tel.: 0176 - 345 11 323
2. Vorsitzende: Shushan Tumanyan
Schriftführer: Ishkhan Nazaryan
Schatzmeisterin: Lusine Shahramanyan
Jugendbeauftragte: Naira Galstyan
Bankverbindung:
Frankfurter Sparkasse
IBAN: DE91500502010000169417
BIC: HELADEF1822
Vorstand ist auch per E-Mail erreichbar: info@armenier-frankfurt.de
www.armenia.de

Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt *Der Vorstand*

8. ՔԱՋ ԴԵՐԶԱԿԸ (Գրիմ եղբայրներ)

Լինում է չի լինում՝ մի դերձակ: Ամառային մի պայծառ առավոտ դերձակը պատուհանի մոտ նստած կար է անում: Տրամադրությունը տեղն է, իսկ գործը թափով առաջ է գնում:

Դէրձակն ականջի պոչով լսում է,որ մի գեղջկուհի է անցնում փողոցով ու կանչում.

- Մուրաբա՛, լա՛վ մուրաբա: Ո՞վ է ցանկանում լավ մուրաբա գնել:

Դերձակը վիզը հանում է պատուհանից ու ձայն տալիս.

- Վերեւ բարձրացիր, տեսնենք, թե ինչ լավ մուրաբա ես ծախում:

Կինը ծանր բեռը շալակած բարձրանում է դերձակի մոտ ու սկսում է իրար ետեւից բաց անել տեսակ-տեսակ մուրաբաների ամանները: Դերձակը զննում է մուրաբաները, հոտոտում, ապա ասում է.

- Կարծես թե լավն են: Դե լավ, ինձ համար կշռիր հարյուր գրամ:

Կինը, որ մեծ առեւտրի հույս է ունենում, կշռում է դերձակի ուզածը եւ վրդովմունքից փնթփնթալով գնում:

- Օրհնյալ լինի այս մուրաբան, ինձ նոր ուժ ու եռանդ կտա,- ասում է դերձակն ու հաց հանում պահարանից, մուրաբա քսում վրան:

- Համով պատառ է, բայց նախ վերջացնեմ ձեռքիս գործը, հետո ուտեմ:

Նա հացի կտորը դնում է կողքն ու շարունակում կարել, բայց ուրախությունից կարերը մեծ-մեծ են ստացվում:

Իսկ քաղցր մուրաբայի բույրը տարածվում է սենյակով մեկ ու պատերին նստած ճանճերը գալիս հավաքվում են հացի վրա:

- Ձե՞զ ով կանչեց,- նեղսրտում է դերձակն ու փորձում քշել աներես ճանճերին:

Բայց ճանճերը չեն լսում նրան, ավելի շատ են հավաքվում: Դերձակը համբերությունից դուրս է գալիս, վերցնում է մահուդի կտորն ու, շրը՛խկ, խփում ճանճերին: Մահուդի կտորը ետ է քաշում, նայում, հաշվում. Յոթ ճանճ է սատկացրել: «Այ թե քաջ եմ հա՛,- ասում է ու ինքն էլ

զարմանում իր քաջության վրա: - Չէ, սա այսպես չի մնա, սրա մասին պիտի ողջ քաղաքն իմանա»:

Անմիջապես մի գոտի է կարում, վրան մեծ-մեծ տառերով գրում. «Մի զարկով սպանեց յոթ շունչ»:

«Ինչո՞ւ քաղաքը,- մտածում է նա,- ամբողջ աշխարհը պիտի իմանա այս մասին»:

Նրա սիրտն ուրախությունից թպրտում է:

Գոտին կապում է մեջքին ու պատրաստվում ոտքի տակ տալ ամբողջ աշխարհը: Նրան արդեն սկսում է թվալ, որ դերձակի արհեստանոցը խիստ նեղ է իր քաջությունը տեղավորելու համար: Բայց նախքան ճանապարհ ընկնելն ամբողջ տունը տակնուվրա է անում, տեսնի՝ ինչ կա հետը վերցնելու համար, ու բացի մի կտոր պանրից, ուրիշ հարմար բան չի գտնում: Դարպասի մոտ թփերի մեջ խճճված մի թռչուն է պատահում. նրան էլ է բռնում, պանրի հետ միասին խցկում գրպանը: Հետո համարձակ ճանապարհ է ընկնում:

Գնում է, գնում, հասնում է մի բլրի: Բլրի վրա մի վիթխարի հսկա նստած հանգիստ շուրջն է նայում: Դերձակը համարձակ մոտենում է նրան ու ասում.

- Բարեւ եղբայր, ի՞նչ ես նստել ու չորս կողմդ նայում: Ես գնում եմ աշխարհ շրջելու, ուզում եմ բախտս փորձել, չե՞ս միանա ինձ:

Հսկան արհամարհանքով նայում է դերձակին ու ասում.

- Այ դու ողորմելի թափառաշրջիկ:

- Ախ այդպե՛ս,- պատասխանում է դերձակը, արձակում կոճակներն ու ցույց տալիս գոտին: - Դե հիմա կարդա ու իմացիր՝ ի՛նչ մարդ եմ ես:

Հսկան կարդում է. «Մի զարկով սպանեց յոթ շունչ»: Կարծում է՝ խոսքը մարդկանց է վերաբերվում, ու հարգանքով է լցվում այդ փոքրիկ մարդու հանդեպ: Բայց ցանկանում է նախ փորձել նրան: Քարը ձեռքն է առնում ու այնպես սեղմում, որ ջուր է կաթում:

- Հիմա էլ դու փորձիր,-ասում է հսկան,- եթե ուժդ կպատի:

- Դա ինձ համար դատարկ բան է,- ասում է դերձակը:

Նա ձեռքը տանում է գրպանը, հանում պանրի կտորն ու այնպես սեղմում, որ ամբողջ հյութը

քամվում է:

- Հը, ի՞նչ կասես, վատ չարի, չէ՞:

Հսկան չի իմանում ինչ ասի, փոքրիկ մարդուց նման բան չէր սպասում: Նույն ժամանակ նա մի քար է վերցնում ու վերեւ նետում, այնքան վեր, որ հետքն անգամ չի երեւում:

- Դե հիմա էլ դու փորձիր:

- Ոչինչ, վատ չէր,- ասում է դերձակը,- բայց քարը վերադարձավ ու ընկավ գետնին, ես հիմա այնպես կնետեմ, որ իսկի ետ էլ չի գա:

Նա ձեռքը տանում է գրպանը, հանում թռչունն ու վեր նետում: Ազատություն ստացած թռչունը վեր է թռչում ու, պարզ բան է, էլ չի վերադառնում:

- Հը՞, հիմա ի՞նչ կասես,- հարցնում է դերձակը:

- Լավ ես նետում,- ասում է հսկան,- բայց տեսնենք կարո՞ղ ես ծանրություն բարձրացնել:

Նա դերձակին տանում է մի կտրված վիթխարի կաղնու մոտ:

- Դե որ ուժեղ ես,- ասում է,- օգնիր այս ծառը դուրս բերենք անտառից:

-Լավ,- ասում է դերձակը,- դու ծառաբունը դիր ուսիդ, ես էլ ճյուղերը կբարձրացնեմ: Ճյուղերն ավելի ծանր են:

Հսկան ծառաբունը դնում է ուսին, իսկ դերձակը նստում է ճյուղերից մեկին: Հսկան չի կարողանում շրջվել ու ետ նայել, իսկ դերձակն օգտվում է դրանից եւ մի ուրախ երգ է սուլում՝ իբր ծառ տանելը խաղ ու պար է նրա համար:

Հսկան տանում է ծանր բեռը, հոգնում է, էլ չի դիմանում:

- Լսի՛ր, հոգնեցի, ծառը պիտի դեն նետեմ,- ասում է:

Դերձակը ճարպկորեն ցած է թռչում ճյուղից, երկու ձեռքով բռնում ծառը, իբրեւ թե մենակ ինքն է տանում ու հսկային ասում է.

- Այդքան մեծ ես, բայց մի ծառ չես կարողանում տանել:

Ծառը թողնում են, երկուսով շարունակում ճանապարհը:

Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt *Der Vorstand*

Անցնում են մի բալենու մոտով: Հսկան բռնում կռացնում է բալենու վերին ճյուղերից մեկը, որի վրա հասած պտուղներ են լինում, տալիս դերձակին, որ նա բռնի ու հյուրասիրվի: Բայց դերձակը չի կարողանում պահել ճյուղը, հենց որ հսկան ձեռքը ետ է քաշում, ճյուղը բարձրանում է, դերձակն էլ հետը: Հետո բարեհաջող ընկնում է գետնին: Հսկան ասում է.

- Ո՞նց է որ փոքրիկ ճյուղն էլ չես կարողանում պահել: Այդքան ուժ էլ չունես:

- Ուժ բավականաչափ ունեմ,- ասում է դերձակը: -Քո կարծիքով, դա որեւէ նշանակություն ունի՞ մի զարկով յոթին սպասնող մարդու համար: Ես դիտմամբ ծառի վրայով թռա, ախր ցածով որսորդները կրակում են թփերի մեջ: Հապա դու էլ թռիր, տեսնենք կարո՞ղ ես:

Հսկան փորձում է, բայց չի կարողանում, կախվում է ճյուղերից: Այնպես որ այստեղ էլ է դերձակը հաղթում: Հսկան ասում է.

- Դե որ դու այդքան քաջ ես, միասին գնանք մեր քարանձավը, այնտեղ գիշերենք:

Դերձակը համաձայնում է ու հսկայի ետեւից գնում: Նրանք մտնում են քարանձավ, տեսնում՝ խարույկի շուրջ ուրիշ հսկաներ էլ կան նստած. Ամեն մեկի ձեռքին՝ մի խորոված ոչխար: Դերձակը նայում է շուրջն ու մտածում. «Այստեղ շատ ավելի ընդարձակ է, քան իմ արհեստանոցում»:

Հսկան նրան մի անկողին է ցույց տալիս ու ասում, որ պառկի, հանգիստ քնի: Անկողինը շատ մեծ է լինում դերձակի համար, նա ոչ թե պառկում է, այլ ծվարում է մի անկյունում: Կեսգիշերին հսկան մտածում է, որ դերձակը խոր քնած կլինի արդեն, վերցնում է երկաթե նիգն ու մի հարվածով երկու կես անում մահճակալը, կարծելով, որ միաժամանակ դերձակին էլ ճզմած կլինի:

Վաղ առավոտյան հսկաները գնում են անտառ, դերձակին նույնիսկ չեն էլ հիշում: Մեկ էլ սա ուրախ-ուրախ հայտնվում է նրանց առաջ: Հսկաները վախենում են, թե սա իրենց բոլորին կսպանի, ու սարսափահար փախչում են:

Դերձակը շարունակում է ճանապարհը:

Գնում է, գնում է, հասնում է մի թագավորական պալատի: Հոգնած է լինում, պառկում է խոտերին ու քնում: Պառկած ժամանակ մարդիկ գալիս են ու նրան մի լավ տնտղում բոլոր կողմերից, կարդում գոտու վրայի գրվածը. «Մի զարկով սպանեց յոթ շունչ»:

- Նման քաջն ի՞նչ է անում այստեղ: Երեւի շատ նշանավոր մարդ է սա:

Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt *Der Vorstand*

Գնում են ու նրա մասին հայտնում թագավորին, մտածելով, որ պատերազմի ժամանակ շատ օգտակար կարող է լինել, խորհուրդ են տալիս, թե նրան ոչ մի դեպքում ձեռքից պետք չէ բաց թողնել: Խորհուրդը դուր է գալիս թագավորին, եւ նա պալատականներից մեկին ուղարկում է, որ երբ դերձակն արթնանա, առաջարկի զինվորական ծառայության մտնել թագավորի մոտ:

Պատվիրակը գալիս է նրա մոտ, նստում ու սպասում, մինչեւ որ սա հորանջելով արթնանում է, բացում աչքերը, այդ ժամանակ հայտնում է թագավորի պատվերը:

- Հենց դրա համար եմ եկել այստեղ,- ասում է դերձակը:- Ես պատրաստ եմ ծառայության մտնել թագավորի մոտ:

Նրան պատվով ընդունում են ու առանձին շենք հատկացնում: Բայց թագավորի զինվորների սրտով չի լինում, ուզում են նրանից ազատվել: «Մեկ էլ տեսար վիճեցինք, ինչի նման կլինի,- ասում են իրար մեջ,- որ հարձակվի ու յոթիս միանգամից գետին փռի: Ոչ մեկս չի կարող նրա հետ չափվել»: Որոշում են գնալ թագավորի մոտ ու ազատվել աշխատանքից:

- Ինչպե՞ս կարող ենք այդպիսի մարդու հետ ոտք մեկնել,- ասում են,- եթե մի հարվածով գետին է փռում յոթին:

Թագավորը տխրում է, որ մի հոգու պատճառով ստիպված է զրկվել այդքան հավատարիմ մարդկանցից: Որոշում է ազատվել դերձակից: Բայց թե ինքն էլ է վախենում: Բա որ իրե՞ն էլ գետին փռի: Երկար ծանրութեթեւ է անում, վերջը դերձակին կանչում է ու պատվիրում.

- Թե որ այդքան քաջ ես, քեզ մի լուրջ առաջադրանք եմ տալիս: Թագավորական անտառում երկու հսկա են ապրում, որոնք մեծ վնաս են հասցնում իրենց ավազակություններով ու հրդեհներով, ոչ ոք սիրտ չի անում մոտենալ նրանց: Եթե սպանես, այդ երկուսին, խոստանում եմ ամուսնացնել իմ միակ դստեր հետ, թագավորության կեսն էլ օժիտ կտամ: Քեզ հարյուր հեծյալ կտամ որպես օգնական ուժ:

«Վատ առաջարկ չի,- մտածում է դերձակը,- թագավորի գեղեցկուհի աղջկան կին առնել, դեռ թագավորության կեսն էլ օժիտ ստանալ, ամեն անգամ նման առիթ չի լինի»:

-Համաձայն եմ,- ասում է նա,- հսկաներին ես կսպանեմ, դրա համար հարյուր հեծյալի կարիք չկա: Մի հարվածով յոթին սպանողի համար երկուսին սպանելը դատարկ բան է:

Դերձակը ճամփա է ընկնում, հարյուր հեծյալն էլ նրա հետեւից: Որ հասնում են անտառի եզրին, ուղեկիցներին ասում է.

Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt *Der Vorstand*

- Դուք մնացեք այստեղ, հսկաների հարցը ես մենակ կլուծեմ:

Մտնում է անտառ: Գնում է, գնում, մեկ էլ տեսնում է՝ երկու հսկաները պառկել են ծառի տակ ու քնել: Այնպես են խռմփացնում, որ ծառի ճյուղերը երերում են:

Դերձակը գրպանները քար է լցնում, բարձրանում ծառը: Բարձրանում նստում է հենց այն ճյուղին, որը քնածների վրա է տարածվում, ու սկսում է քարերով խփել նրանցից մեկի կրծքին:Մի քանի անգամ խփելուց հետո հսկան վերջապես արթնանում է, խփում է ընկերոջ կողքին ու ասում.

- Ինչու՞ ես խփում:

- Երազում ես տեսել,- պատասխանում է ընկերը,- ես չեմ խփել:

Եւ նորից է քնում: Իսկ դերձակը հիմա էլ քար է շպրտում երկրորդ հսկայի վրա:

- Սա ի՞նչ բան է,- գոչում է երկրորդը: - Ինչո՞վ ես խփում ինձ:

- Ոչ մի բանով էլ չեմ խփում,- պատասխանում է աաջինն ու սկսում փնթփնթալ:

Այդպես վիճում են հսկաները, վերջը հոգնում են վիճելուց, հաշտվում են ու նորից քնում: Դերձակը շարունակում է իր խաղը. Վերցնում է ամենամեծ քարն ու ուժգին խփում առաջինի կրծքին:

- Դու արդեն չափն անցում ես,- գոռում է սա, տեղից վեր թռչում, բռնում ընկերոջն ու զարկում ծառին:

Երկրորդը պատասխանում է նույն ձեւով: Նրանք այնպես են կատաղում, որ արմատախիլ են անում ծառերն ու խփում իրար: Այնքան են իրար խփում, որ երկուսն էլ անշնչացած փռվում են գետնին:

Դերձակը ցած է իջնում ծառից: «Բախտս բերեց,- ասում է նա,- որ իմ ծառը չպոկեցին, թե չէ ստիպված սկյուռի պես ծառից ծառ պիտի թռչեի»:Նա հանում է իր սուրն ու նախ խրում մեկ, ապա մյուս հսկայի կուրծքը, հետո գնում է հեծյալների մոտ ու ասում.

-Վերջ, երկուսին էլ սպանեցի: Գործս մի քիչ դժվարացավ, նրանք արմատախիլ արին շրջակայքի բոլոր ծառերը, որպեսզի պաշտպանվեն, բայց դա ի՛նչ է մի մարդու համար, ով յոթին մի հարվածով է սպանում:

Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt *Der Vorstand*

-Դու վիրավոր չե՞ս,- զարմանում են հեծյալները:

-Ամեն ինչ բարեհաջող անցավ,- պատասխանում է դերձակը,- մազիս էլ չկպան:

Հեծյալները չեն ուզում հավատալ, գնում են ստուգելու: Գնում են տեսնում՝ հեծյալները սպանված են, շուրջն էլ բազմաթիվ արմատախիլ արված ծառեր:

Վերադառնում, ամեն ինչ պատմում են թագավորին:

Դերձակը պահանջում է իր պարգեւը, բայց թագավորը փոշմանում է, սկսում է նոր պատրվակ մտածել նրանից ազատվելու համար:

- Նախքան աղջկաս եւ թագավորությանս կեսը ստանալը, դու պետք է մի հերոսություն էլ անես: Անտառում մի միաեղջյուր կա: Նա էլ է մեծ վնաս հասցնում տերությանը, պետք է բռնես նրան:

-Միաեղջյուրը պակաս վտանգավոր է, քան երկու հսկաները,- ասում է դերձակը: -Մի զարկով յոթին սպանողի համար դա ինչ է որ:

Նա հաստ պարան ու կացին է վերցնում, գնում անտառ: Թագավորը նրան օգնական ուժեր է տրամադրում: Դերձակը սրանց պատվիրում է սպասել անտառի ծայրին, ինքը մտնում է անտառ: Երկար սպասելու հարկ չի լինում, հայտնվում է միաեղջյուրն ու սլանում ուղիղ դերձակի վրա, ուզում է եղջյուրով խոցել նրան:

- Կամա՛ց, կամա՛ց,- ասում է դերձակը,- շտապելու կարիք չկա:

Նա կանգնում է, սպասում, մինչեւ կենդանին մոտենա, հետո ճարպկորեն ետ է քաշվում ու թաքնվում ծառի ետեւում: Միաեղջյուրը թափով գալիս է, հարվածում ծառին, եղջյուրն այնքան խորն է խրվում ծառի մեջ, որ այլեւս չի կարողանում դուրս քաշել:

-Հիմա թռչնակը ձեռքումս է,- ասում է դերձակը պարանը գցում է միաեղջյուրի վիզն ու կացնով կտրում ծառի մեջ խրված եղջյուրը:

Եւ կենդանուն առաջն արած՝ տանում է թագավորի մոտ:

Բայց թագավորն էլի չի ուզում խոստացած պարգեւը տալ, երրորդ պայմանն է ասում: Դերձակը հարսանիքի համար պիտի մի վարազ բռնի, որը մեծ վնաս է տալիս անտառին: Օգնության համար թագավորը նրան որսորդների խումբ է հատկացնում: -Լավ,- համաձայնում է դերձակը,- դա ինձ համար զվարճություն է:

Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt *Der Vorstand*

Որսորդներին նա թույլ չի տալիս անտառ մտնել: Դե նրանք շատ էլ գոհ են մնում, որովհետեւ վարազից վախենում են:

Երբ վարազը նկատում է դերձակին, ժանիքները սրած հարձակվում է, բայց ճարպիկ դերձակը նետվում է մոտակայքում գտնվող մատուռն ու անմիջապես էլ դուրս թռչում պատուհանից: Վարազը ներս է խուժում նրա հետեւից, իսկ դերձակը պտտվում է մատուռի շուրջն ու արագ փակում դուռը: Վարազը բռնվում է: Նա հո չէր կարող պատուհանից դուրս գալ:

Դերձակը կանչում է որսորդներին, որ իրենց աչքով տեսնեն բռնված վարազին, իսկ ինքը գնում է թագավորի մոտ: Թագավորը տեսնում է՝ ճար չկա, տալիս է ե՛ւ աղջկան, ե՛ւ թագավորության կեսը:

Եթե թագավորն իմանար, որ իր առջեւ կանգնածը մի սովորական դերձակ է, շատ վատ կզգար: Մեծ հարսանիք են անում, ու դերձակը դառնում է թագավորի փեսան:

Անցնում է որոշ ժամանակ, արքայադուստրը գիշերը լսում է, թե ինչպես է ամուսինը քնած տեղը խոսում. «Երիտասարդ շուտ ինձ համար մի բաճկոն կարի ու շալվարս կարկատի, թե չէ արշինով կհասցնեմ գլխիդ»: Արքայադուստրը գլխի է ընկնում, թե ով է իր ամուսինը: Առավոտյան պատմում է հորն ու խնդրում, որ իրեն ազատի խայտառակությունից. Չէ՞ որ ամուսինը սովորական դերձակ է: Թագավորը հանգստացնում է նրան, ասում է.

- Գիշերը չփակես ննջարանի դուռը, իմ ծառաները կկանգնեն դռան մոտ: Երբ ամուսինդ քնի, ներս կմտնեն, կկապկպեն, կտանեն նավը կդնեն, կուղարկեն հեռավոր երկրներ:

Արքայադուստրը գոհ է մնում որոշումից, թողնում գալիս է:

Պատահաբար դերձակի թիկնապահը լսում է նրանց զրույցը, գալիս հայտնում է դերձակին:

-Ոչինչ, գլուխ կհանեմ,- ասում է դերձակը:

Երեկոյան սովորական ժամին պառկում է կնոջ հետ: Կինը կարծում է, թե նա քնած է, վեր է կենում, դուռը բացում ու էլի պառկում:

Իսկ դերձակը քնած էր ձեւանում, հենց կինը դուռը բացում է, սկսում է բարձր-բարձր գոռալ.

- Երիտասարդ, ինձ համար բաճկոն կարի ու շալվարս էլ կարկատի, թե չէ արշինով կհասցնեմ գլխիդ: Ես մի զարկով յոթ շունչ եմ սպանել, երկու հսկա եմ սպանել, բռնել եմ միաեղջյուրին ու վայրի վարազին, այդ էր պակաս, որ դռան մոտ կանգնածներից վախենամ:

Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt *Der Vorstand*

Ծառաները լսում են դերձակի խոսքերը, վախից լեղաճաք են լինում, թողնում ու փախչում են: Դրանից հետո ոչ ոք այլեւս չի համարձակվում դերձակին ձեռք տալ:

Մի օր էլ դերձակը թագավորի փոխարեն նստում է գահին ու մինչեւ կյանքի վերջը մնում է թագավոր:

Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt *Der Vorstand*

Գրականության ցանկ

Գրիմ Եղբայրներ, «Քաջ դերձակը»: Ռուսերենից թարգմանեց Ամալյա Ղուկասյանը: Արեւիկ հրատ., Երեւան 2007թ., էջ 49-56:

Հովհ. Թումանյան, «Ուլիկը», Հայկական հեքիաթներ, կազմող՝ Սմբատ Գյուրջյան: «Ջի էս էմ ստուդիա» ՍՊԸ, Երեւան 2014, էջ 9-10:

Հովհ. Թումանյան, «Քաջ Նազարը», Հայկական հեքիաթներ, կազմող՝ Սմբատ Գյուրջյան: «Ջի էս էմ ստուդիա» ՍՊԸ, Երեւան 2014, էջ 52-59:

Համացանցից

Հղումը՝ http://armenianhouse.org/tumanyan/tales-am/kingdom.html, վերջին մուտք՝ 9.04.2023:

Հղում՝ https://grqaser.org/am/102/, վերջին մուտք՝ 9.04.2023:

Հղում՝ https://tarntercum.ru/2016/11/grim-exbayrner-gayln-u-yot-uliknery.html, վերջին մուտք՝ 9.04.2023:

[1]Հղում՝ https://hy.wikisource.org/wiki/Շունն_ու_Կատուն, վերջին մուտք՝ 9.04.2023:

Հղում՝ https://grqaser.org/am/318/, վերջին մուտք՝ 9.04.2023: